



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


1997

Պ. ԼԵՊԵՇԻՆՍԿԻ

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Պրոպագանդիստների յե՛վ ազիտացիոնների
համար





Պ. ԼԵՊԵՇԻՆՍԿԻ



ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

46092

ՊՐՈՊԱԳԱՆԴԱՑՆԵՐԻ ՅԵՎ ԱԳԻՏԱՑՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բաղեկակների կուսակցության յերեսնամյակի
առթիվ

ԹԱՐԳՄ. ՏԻԳՐԱՆ ՀԱՆՈՒՄՅԱՆ

A 8230



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ԳՐԱՌԵՊ [ԳԼԽՎԱՐ 881 Բ.

ՊԱՏՎԵՐ 3933.

ՏԻՐԱԺ 2000

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ

(Անցյալ դարի 90-ական թվականները)

2. ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկության տարբեր խմբերի միջոցով պատմությունը — հասարակական արտադրության սխեմաների այնպիսի մի փոփոխություն է, փոքրիկին մշտապես պայքար և առաջացրել հասարակական ներհակ դասակարգերի միջև: Կապիտալիստական հասարակության մեջ պատմական բեմի վրա պայքար են մղում իրար դեմ յերկու հիմնական դասակարգ, փոքրիկ վերաբերմունքը դեպի արտադրության միջոցները և փոքրիկ դերը աշխատանքի հասարակական կազմակերպության մեջ ելնապես տարբերում են նրանց իրարից: Տարբերում են նրանց՝ այդ կապակցությամբ՝ նաև հասարակայնությունը—կազմակերպված աշխատանքով ստեղծված արդյունքից տարբեր չափով բաժին ստանալու յերկու հիմնականը: Այդ դասակարգերը—բուրժուազիան և և պրոլետարիատը: Նրանց միջև պայքարն անխուսափելի է, փոքր և աստիճանաբար ապկիլ և ապկիլ սուր ձևեր և ստանում, ինչ չափով վրա ապկիլ և ապկիլ է լայնանում այդ յերկու դասակարգն իրարից անջատող ան-

դունդը: Այդ պայքարն անխուսափելիորեն մղում է դեպի այն միակ ձեւը, յորով հնարավոր է լուծել աշխատանքի և կապիտալի միջև գոյություն ունեցող սրատմական վեճը—սոցիալիստական հեղափոխության միջոցով: Պայքարի պրոցեսում դասակարգերից յուրաքանչյուրն ել ավելի և ավելի յե կազմակերպվում ռադիմականորեն:

Այդպիսի կազմակերպության անհրաժեշտ մոմենտներից մեկն ել յուրաքանչյուր պայքարող կողմի համար—դասակարգային ինքնորոշման և դասակարգային պայքարի մարտական կենտրոն ստեղծելն և՛ ի դեմս տվյալ դասակարգի քաղաքական կուսակցության: Ասկայն, պետք է առել, վոր կուսակցության ինքիւրը միեւնոյն նշանակությունը չունի սրբութարիատի և բուրժուազիայի համար: Այս վերջինս, վոր ներկայանում է վորսեւ անհատապաշտօրեն տրամադրված գիշատիչների մի խումբ, տակավին կարող է յերբեմն թույլ տալ իրեն քաղաքական հատուկ կուսակցություն չունենալու և առանց քաղաքական բացորոշ ծրագրի գործելու, յորովհետեւ առանց այդ ել նա գրավել է արդեն պետության բոլոր իշխող բարձրունքները և նրա տրամադրության տակ են գտնվում շահագործվող մասսաներին ճնշելու բազմատեսակ գործիքներն ու յեղանակները: Այդ դեռ բավական չէ. իր դասակարգային հակառակորդին թուլացնելու և կազմալուծելու շահերի տեսակետից յերբեմն նրան ձեռնառու յե լինում դասակարգային համագործակցություն և սոցիալական իրադարձություն քարոզել, կոչ անելով դեպի «անկուսակցական» պայքարը ֆեոդալականության մնացորդ—

ների դեմ և դեպի քաղաքական «անտարբերութիւնը» հանդեպ տիրող հանրակարգի հիմունքները և այլն։

Սակայն պրոլետարիատի համար, վորն իր դասակարգային պայքարում չունի և վոչ մի այլ գնեք, բացի իր յերկաթե կարգապահութիւնը, — նրա դասակարգային ինքնորոշման «անկուսակցականութիւն» դասարը վոչ այլ ինչ և, բայց յեթե չարամիտ մի լողունգ, վոր դասակարգային թշնամիներն են չընջում նրա ականջին։ Պրոլետարական բոլոր դասակարգային յետախնդրի պահին ռազմական շտաբի դեր կատարող ամբակուռ և զոգւած կուսակցութիւն բացակայութիւնը — պրոլետարիատի դժբախտութիւնն և հանդիսանում և՛ նրա թուլութիւնն արտահայտութիւնը։ Ահա թե ինչու լենինյան կուսակցութիւնն պատմութիւնն պանծալի յերեսուն տարիներէ ընթացքում նրա՝ անդալաճան սկզբունքն և յեղեք — սպաքարը հանուն կուսակցութիւն, հանուն նրա սկզբունքների անաղարտութիւն և հանուն նրա միասնութիւն, ինչպէս նաև նրա չարքերի հարատե դտումը կուսակցութիւնն մեջ յեղած այն անկայուն տարրերի դադարական և կազմակերպչական քայքայման արդունքներից, վորոնց ճակատին դրոշմւած և նրանց ինտելիգենտական և մանր-բուրժուական ծաղման կրնիքը։

2. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՆՉՊԻՍԻ
ՊԱՐԱԳԱՅՈՒՄ Ե ԳՈՅԱ-
ՑԵԼ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿ-
ՑՈՒԹՅՈՒՆԸ

Հետարեւոտդչական չըջանում (1861 թվականից հետո) արագ թափով առաջ գնացող կապիտալիստական զարգացման ուղիներէ վրա վոտք դրած Ռուսագետներ մի չարք դժվարութիւններ և հիմանդու-

Թյուններ եր ապրում՝ կապիտալիզմի քերազարգացման շնորհիվ: Այստեղից եւ ըզխում եր՝ ազնվականութեան գերիշխող դերը պետութեան կյանքում, պոլիցիական-ինքնակալական ռեժիմի եւ Ֆեոդալական այլ միացորդների կենսունակութունը: Յեւ նույն այդ հանգամանքն եւ զարհուրելի աղքատութուն եր առաջ տեսնում գյուղացիութեան մեջ (վոչ այնքան առիթ եր դառնում նրանց պրոլետարացման, վորքան հենց աղքատացման): Դրան զուգընթաց սխալ ուղիներով եր առաջ դնում նաեւ 70-ական եւ 80-ական թվականների հեղափոխական շարժումը (պրոլետարիատի ուշացած զարգացման շնորհիվ), վորպիսին իդեալականացնում եր գյուղացութունը եւ այդ իդեալականացումն արտահայտվում եր հեղափոխական նարոդնիկութեան մոտ Ռուսաստանի տնտեսական զարգացման «ինքնուրույնութեան», այլ եւ «Ժողովուրդը» հին պապենական համայնքից անմիջականորեն դեպի սոցիալիզմը փոխանցելու գաղափարներով եւ այլն:

70-ական թվականների վերջերը եւ հաջորդ տնտեսամիջին սկսեցին ցուցահանել պրոլետարիատի, վորպէս դասակարգի, պատմական նախաբեմը յեղնելու մոտալուտ նշանները (ինչպէս, որինակ, հուլիսի 1-ի Մոսկովյան գործադուլը, մեկ կողմից եւ ռուս բանվորների Հյուսիսային միութեան կազմակերպութունը՝ մյուս կողմից): Սակայն, տնտեսական եւ քաղաքական հնամենի պատվարները ջախջախելով առաջ անցնելու հիրավի հզորագույն մի գործ եր արդյունաբերութեան 90-ական թվականների բուռն աճումը եւ 1895-99 թվականների՝ Ռուսաստանում հասնիմած գործադուլա-

յին շարժումը: Ահա, մի քանի թվեր, վոր կարող են դադարաւոր աւել այդ յերեւոյթի մասին^{*}). —

Թվական-ները	Արտադր. գու-մարը (միլ. ռուբլիներով)	Բանվորնե-րի թիվը (հազարնե-րով)	Թույլատրե-լիք աշխատ. քանակը (միլ. ռուբլի)	Նրանց կա-պիտալները (հազար ֆրանկ.)	Գործադու-լավոր բան-վոր. թիվը (Մարտովի տվյալներով)
1890	1.503	1.425	—	—	—
1891	—	—	—	—	—
1892	—	—	—	—	—
1893	1.735	1.583	—	—	—
1894	—	—	3	7.350	—
1895	—	—	7	30.050	48.000
1896	2.591	1.818	25	95.370	67.000
1897	2.839	2.098	19	59.165	102.000
1898	—	—	36	127.725	87.000
1899	—	—	71	215.190	180.000

3. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ- Լենինի առերւմ 1884-1894
 ՅԻ ԹԵՈՐԻԱՅԻ ՅԵՎ ԾՐԱ- Թվականների ժամանակա-
 ԳՐԻ ԾԱԴԴԱՆ ՈՒ ԿԱՅՈՒ- շրջանում ճնոր ուղղու-
 ՆԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈ- Թյան կողմնակիցների թի-
 ՍԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ- վը Ռուսաստանում միա-
 ՄԱՆ ՇՐՋԱՆԸ վորներէից ավելի չեր: Սո-
 ցիալ-դեմոկրատիան դոյություն ուներ առանց

^{*}) Տե՛ս Վ. Նեվսկու աշխատութիւնը. — «Ռկ կու-սակցության (բ) պատմության ակնարկները», հատ. I. ԴԼ. VI:

բանվորական շարժման, ապրելով, վորպես քաղաքական կուսակցության, իր դարդացման սաղմային պրոցեսը: Յեւ պնդումենայնիվ, շնորհիվ «Աշխատանքի Ազատագրություն» խմբի դործունեության, հեղափոխական մարքսիզմի համար հոգն արդեն պատրաստված եր՝ հաղթահարելու իր հոգևարքն ապրող նարոդնիկականությանը: Հաղթանակող այդ նոր ուսմունքը 1894-98 թվականներին տարածվում է հեղափոխական ինդելիգենցիայի մեջ «համաճարակի արագությամբ» (ինչպես արտահայտվել եր Լենինը): Պլեխանովի (Բեկտովի-Վոլգինի) և Լենինի (Տուկինի) գրական յեկույթները 1894-95 թվականներին («Պատմունքներ մոնիստական աշխարհայացքի», «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Սարուվեյի գրքում», «Ի՞նչ բան են «Ժողովրդի բարեկամները» և այլն) —ամբողջ մի դարաշրջան են կազմում իդեոլոգիական ուղղությունների փոփոխության մեջ: Ծագում և փթթում է այսպես կոչված «լեզալ մարքսիզմը», վորպիսին սկըդրում հնարավորություն է տալիս դործակցելու Սարուվեյին, Բուլգակովին, Տուկան Բարանովսկուն հեղափոխական մարքսիզմի նույնիսկ այնպիսի որթողոքալ ներկայացուցիչներին, ինչպես Լենինը և Պլեխանովը և վորը (լեզալ մարքսիզմից) հետագայում, այլասերվելով զասի —մարքսիստների կողմից, ամենաանամոթ կերպով կեղծում և հրամեցնելով բուրժուական միտքը, իբրև «խեղական մարքսիզմ»: Մարքսիստական թևորիայի ծագման այդ շրջանն իդուր և պատահականորեն չէ, վսր զուգորդվում է 90-ական թվականների բանվորական շարժման հորձանքին:

4. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈ- 90-ական թվականների
 ԽԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈ- Հեղափոխական ինտելիգեն-
 ԿՐԱՏԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ցիայի շարքերում մարք-
 ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱ- սիզմը տարածելու համար
 ՆՈՒՄԸ ՅԵՎ ՌՈՒՍ ՍՈՑԻ- ուղիների առևտրական մաք-
 ԱԼ-ԴԵՄՈՂԿՐԱՏՆԵՐԻ ՄՏԱ- բույժը հիմնական դժբերա-
 ՎՈՐ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ 90- կատարված եր արդեն 90-
 ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՐԿ- ական թվականների յերկ-
 ՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ . բորդ կիսում : Սակայն սո-

ցիալ-դեմոկրատների պրակտիկ դործունեյությունը
 դեռ ևս ըստ ամենայնի լրացած և պարզորոշ ձևեր
 չեն ստացել : Այդ ուղղությամբ հակայական կարե-
 վորություն ունեցող մի ոժանդակություն եր Լենինի
 դրած և արտասահմանում հրատարակված՝ «Ռուսա-
 կան սոցիալ-դեմոկրատների խնդիրները» վերառու-
 թյամբ բրոշյուրը : Հանձարեղ այդ աշխարհը տմե-
 նահակիրձ ձևով պատկերացնում և մեղ դործողության
 մեջ դրված հեղափոխական մարքսիզմի բոլոր հիմ-
 նական պրոբլեմների լուծումը : Բրոշյուրի հիմնական
 դադարարները կարելի չե ձևակերպել հետևյալ թեզե-
 բով : Պրոլետարիատի շարքերում դիտական սոցիա-
 լիզմի պրոպագանդը մղելու սերտ կապակցությամբ
 բանվորների շրջանում ագիտացիա ևս սկիտի մղվի
 բանվորական կյանքի դործնական և կենցաղային խըն-
 դիրների շուրջը , վորի ժամանակ սոցիալ-դեմոկրա-
 տիայի դիտավոր ասպարեզը սկիտք և լինի Փարբիկա-
 դործարանային բանվորական մասսան , իսկ այստեղից
 արդեն հեղափոխական շարժումը կտարածվի ավելի
 մանր կանաչներով : Սոցիալ-դեմոկրատներն իրանց
 աշխատանքի մեջ դիտավոր կենտրոններից մեկը սկիտք

ե դարձնեն դեմոկրատական դադափարները պրոպագանդը։ Ազխտացիա մղելով տնտեսական մոտավոր պահանջների հիմունքով, սոցիալ-դեմոկրատները պիտի ազխտացիա մղեն նաև հիմք ունենալով մոտավոր քաղաքական կարիքները, պրոլետարիատի, վորսկա առաւելապես ճնշված և առաւելապես իրավագուրկ դասակարգի՝ ծանր կացությունն ու պահանջները։

Սոցիալ-դեմոկրատիայի գործունեության այս յերկու տեսակների միջև անքակտելի կապ և դուգահեռականութիւն լինելու հետ միաժամանակ կա նրանց միջև նաև տարբերութիւն.—իր տնտեսական պայքարում բանվոր դասակարգը միայնակ և, սակայն՝ իր քաղաքական պայքարում նա դաշնակիցներ եուղեկիցներ ունի ի դեմս բոլոր այն ոպողիցոն կերպով տրամադրված տարրերի, վոր դոյութիւն ունին բուրժուազիայի, կրթված դասակարգերի կամ մանր բուրժուազիայի մեջ և կամ թե՛ բացարձակապետության կողմից հալածվող ժողովուրդների, դավանաքների և աղանդների շարքերում։ Այս բոլոր դեպքերում սոցիալ-դեմոկրատներն աջակցում և ոժանդակում են հասարակական առաջավոր դասակարգերին՝ ընդդէմ ուակցիոն դասակարգերի, ամեն տեղ և ամեն ժամանակ ապացուցանելով բացարձակապետության վնասակարութիւնը բանվոր դասակարգի գործի համար, նշելով միաժամանակ այն համերաշխության մասին, վոր կարող և լինել այդ դասակարգի և ոպողիցիոն խմբերի միջև այս կամ այն հարցերում և խնդիրներում։ Այս համերաշխութիւնը, սակայն, պիտի ունենա հարաբերական, պայմանական բնավորութիւն, վորապէհեաւ միայն բանվոր դասակարգն և, վոր քաղաքական կարգերի դեմոկրատաց-

ման համար հետևողական պայքարողն ե հանդիսա-
նում՝ մինչև վերջնական հաղթանակը, մինչդեռ մը-
նացած բոլոր դասակարգերն ել՝ յեթե նույնիսկ նրանք
սպողիցիոն կերպով են տրամադրվում բացարձակապե-
տության նկատմամբ, ապա՝ վոչ անվերապահորեն, այլ
միշտ հեռ-հեռ նայելով: Մի խոսքով, իր դասակարգա-
յին պայքարում սոցիալ-դեմոկրատիայի կողմից ղեկա-
վարվող պրոլետարիատը—ոուս ղեմոկրատիայի առաջ-
նավորող մարտիկն ե հանդիսանում:

«Ռուսական սոցիալ-դեմոկրատները խնդիրները»
որոշյուրի մեջ պարզ ե վորոշակի կերպով ձևակերպ-
ված հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի այս բո-
լոր հիմնական սկզբունքները դեռ ես ընդհանուր հա-
վանության չարժանացան բոլոր սոցիալ-դեմոկրատնե-
րի կողմից: Սովորական ե առօրյա յերևույթ են դառ-
նում մտավոր տատանումներն ու շփոթությունը սո-
ցիալ-դեմոկրատական այն սերնդի գլուխներում,
վոր յեկեկ եր փոխարինելու ասպարիզից հեռացածնե-
րին ե Պետերբուրգի՝ «բանվոր դասակարգի ազատու-
թյան համար պայքարող միության» հիմնադիրներին,
վորոնք՝ քաղաքական աքսորի յենթարկվելով՝ ցրված
եյին տարբեր վայրերը: Լենինի ե «Միության» կազմի
նրա ղինակիցների («ծերունիներ») ձերբակալությու-
նից հետո, նրանց հաջորդները («ջահիշներ») սկսե-
ցին ավելի ե ավելի թեքվել դեպի այն միտքը, թե
պրոլետարիատի դասակարգային պայքարի իսկական
եյությունը—աշխատանքի պայմանների բարելավման
համար մղվող տնտեսական պայքարն ե, իսկ ինչ վե-
րաբերում ե քաղաքական պայքարին, ապա՝ դրանով
չահագրգռված են այլ դասակարգերը՝ աղքատամիտ

(լիբերալ) բուրժուազիայի դիտավորութեամբ, և վոր այդ պայքարն ամբողջովին նրանց պետք և թողնել:

Այսսրինակ տեսակետների («եկոնոմիզմի») գրական առավելագույն ծայրահեղ արտահայտութիւնը տեղ գտաւ Պիտերի սոցիալ-դեմոկրատների որդանի եջէրում 1897-98 թվականներին—«Рабочая мысль»-ում և «Credo» կոչված չարաբաստիկ փաստագրի մէջ, վորը և պատասխանի արժանացաւ («Տասն և յոթ սոցիալ-դեմոկրատների բողոքը») Լենինի և «անդրանիկ կոչի» այն սոցիալ-դեմոկրատների կողմից, վորոնք նրա չուրջն եյին խմբվել աքսորավայրում:

Հերթի յեր դրված այս բոլոր աատանումներին վերջ տալու, ինչպես նաև ուղտական սոցիալ-դեմոկրատիայի բաժան-բաժան աշխատանքները պարզորոշ կերպով կուսակցութեան ինչպես դադափարական, այնպես ել կազմակերպչական ամբողջականութեան նշանաբանի տակ դնելու ինդիքը: Յեւ այդ տեսակետից ամենից սուղ պատմական վորոշ դեր խաղաց Կուսակցութեան I համագումարը:

Վաղուց եր արդեն, վոր
5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԱՆՈՒՄԻ ՆԱԽԱԳՈՒՄԱՐԸ.

բանավորական չարժման
այնպիսի խոշոր կենտրոններում, ինչպես, որինակ, պետութեան մայրաքաղաքները կամ՝ Ուկրաինայի, Կիևի, Ուարկովի նման մեծ քաղաքները և այլն, սկսել եյին բյուրեղանալ մարքսիստական և կամ սոցիալ-դեմոկրատիային մերձեցող միավորութիւններ (այսպէս եյին, որինակ: «Հյուսիսային-ուղտական բան-վորական միութիւնը», «Հարավային-ուղտական բան-

վորական միությունը», «Բրուսնեյան խմբակը»,
 Տոչխակու «ընկերությունը» և այլն)։ Սակայն, թե՛
 իր ծավալով, թե՛ հեղափոխական մարքսիստական
 սկզբունքների անադարաությամբ, թե՛ բանվորական
 մասսաներին մոտիկ լինելու, այլ և այլ մասսաների
 վրա սոցիալիստական ունենալու տեսակետից սոցիալ-
 դեմոկրատական կադմակերպությանն իրապես մերձե-
 նալու առաջին կադմակերպությունը—1894 թվին Լե-
 նինի հիմնած՝ «Պայքարի միությունն» եր Պետեր-
 բուրգում, վորի նմանությամբ «Պայքարի միություն-
 ներ» ծագեցին գրեթե միաժամանակ նաև այլ քաղաք-
 ներում (Մոսկվայում, Յեկատերինոսլավում, Կիևում
 և այլն)։ Սակայն, այդ կադմակերպությունների աշ-
 խոտանքը միասնականացված չեւ, մինչդեռ՝ հենց
 իրապես սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
 ստեղծելու շահերի տեսակետից, այդպիսի միասնակա-
 նացման պահանջն անապագայի սուր կերպով եւ բղ-
 րացվում։ Այդ ուղղությամբ կատարված մի ամբողջ
 շարք փորձերից տվյալ ժամանակաշրջանում ամենա-
 հաջողվածը կիևցիների փորձն եւ, վորոնք ի վիճակի
 յիդան 1898 թվի մարտի 1-ին (հին տոմարով) Մինսկ
 քաղաքում այն ժամանակվա ուսանական սոցիալ-դե-
 մոկրատական հիմնական կադմակերպությանց ներ-
 կայացուցիչների 1 համագումարը հրավիրել (Պետեր-
 բուրգի, Մոսկվայի, Յեկատերինոսլավի և Կիևի չորս
 «միությունների» 9 ներկայացուցիչներից, Կիևի բան-
 վորական կամխոյի, Բուդդի և «Рассвет газета»-յի
 ներկայացուցիչներից)։

Առաջին համագումարը վորեւ մշակված ծրագիր
 չտվեց կուսակցությանը և անգամ իսկ նրա կադմա-

կերպչական նվաճումներն ել ի դերն յեւան համազումարից մի քանի որ անց դուրատուական ժանդարմների ձեռքով կտտարված ավերման հետեւանքով: Սակայն, համադումարի կողմից հրապարակված «Մանիֆեստի» մեջ բացորոշ (թեպետ և վոչ բավականաչափ հետեւողական ձևով) արտահայտվեցին հեղափոխական համերաշխության աշն զաղափարերը, վորոնք հանճարեղ պարզորոշությամբ ձևակերպված եյին լենինյան «խրնդիրներում» և ամենից առաջ—այն միաբեր, թե պրոլետարիատի դասակարգային պայքարը առաջին հերթին քաղաքական պայքար և լինելու և առաջին նվազ՝ պայքար միահեծանության դեմ: Այսպիսով, պարզված եր արդեն այն դրոշակը, վորի շուրջն աշնուհետե կարող եյին համախմբվել բոլոր իսկական սոցիալ-դեմոկրատները: Կուսակցության կազմակերպչական դրոշման առաջին հիմնաքարը դրված եր հենց ի համադումարում, վորպիսին տվյալ դեպքում պիտի գնահատության յենթարկել վոչ վորպես կուսակցության մկրտության «ծիսակատարության» մի մոմենտ, այլ և՛ վորպես նրա կյանքի և գոյության ամբողջ մի չքանիցյալուռն արտահայտությունը և լրացումը:

«Կուսակցության կազմավորվելը 1898 թվի դարնանը,—ասում եր Լենինը իր՝ «Ռ՞նչ անել» բրոշյուրի վերջաբանում»,—այդ չքանի սոցիալ-դեմոկրատների ամենատեղեկ և միևնույն ժամանակ՝ ամենավերջին դործը հանդիսացավ:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Վ. Նեվսկի—«ՌԿ(բ.)ի պատմության ակնարկները», հատոր 1, 2. «Հեղափոխությունը և ՌԿ(բ.)ի

նյութերով և վավերագրերով (քրեստոմատիա), հրատ. Կուսպատի, հատոր I, 3. Լենին—Յերկերի Ժողովածու, հատ. I և II, 4. «Կուսակցության առաջին համագումարի 25-ամյակի առթիվ», հրատ. Կուսպատի և 5. Պ. Լեպեշինսկի—«Կուսակցության առաջին համագումարը», հրատ. «Պրոլետարի»:

II. Հին «ԻՍԿՐԱՅԻ» ՇՐՋԱՆԸ

(1900-1903 թվականները)

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՏԱՆՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻՅ ՀԵՄՈՂԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ.

XIX դարի 90-ական թվականների արդյունաբերական վերելքից հետո առաջանում և սուր կերպով արտահայտված արդյունաբերական ճգնաժամ:

Այսպես, սրինսկի չուգունի հալոցը 1901 թվի 173 միլիոն փթից 1903 թ. հասնում և 149 միլիոնի: Ակցիդային նոր ձեռնարկությունների թիվը 1899 թվի 325-ից իջնում և 1903 թ. մինչև 76-ը և նույն ժամանակամիջոցում նրանց հիմնական կապիտալն ևլ 363 միլիոնից իջնում և մինչև 68 միլիոն ոսկրյու: Փակվող ձեռնարկությունների թիվը զնալով աճում և: Գործադրկությունը և աշխատավարձի նվազումը դարհուրելի ծավալ ևն ստանում: Բանվորների մաստայական արձակումը դործարաններից համատարած «կենցաղային յերեւելթ» և դառնում: Յեւի նույն ալդ սլահին սնանկացած և ալդատացած գյուղացիական մաստային դեմ և դալլիս նաև սովի և վոչնչացման ուրվականը:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԵ՝ Տնտեսական հաղթական
 ՂԱՓՈՈԱԿԱՆ ԹԱՓԸ, ԳՅՈՒ՝ դործադուլն այլևս անց-
 ՂԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԹՆԱՑՈՒ՝ յայլ սեփականութունն և
 ՄԸ ՅԵՎ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ՝ դառնում և 1901-1903 թր-
 ՅԻՆ ԲՈՆԱՄ ՀԵՂԱՓՈՈԱ՝ վականներին պրոլետա-
 ԿԱՆ ՏԵՆԴԱՏԱԳԸ . րիատի դործող ղենքը չի

հանդիսանում նրա պայքարների պահին : Սա-
 կայն , դրա փոխարեն բանվոր դասակարգի դրժ-
 դոհության աճումը արտահայտվում և քաղաքական
 դործադուլների և փողոցային վիթխարի ցույցերի թվի
 բազմացմամբ : Ահա , որինակ , մի քանի թվեր , վոք
 բնորոշ են այդ տեսակետից :

Տ ա ր և թ վ ե ր ք	Գործադուլ արած գործա- բանները թիվը	Այդ թվում քա- ղաքական կայլ վոչ տնտեսական բնույթ ունեցող դործադուլներ		Գործադուլավորների թիվը	Այդ թվում վոչ տնտեսական բնույթ ունեցող դործադուլներ մասնակցողները	
		Բացարձակ թվերը	Բացարձակ թվի տոկոս- ային հարա- բերությունը		Բացարձակ թվերը	Ընդհ. թվի տոկոսային հարաբերու- թյամբ
1895—1897	331	7	2,1	120,592	756	0,6
1898—1900	529	27	5,1	130,037	8,862	6,8
1900—1903	837	142	17,0	155,721	24,584	15,8
1903 թ. բն- թացքուն	550	126	22,9	86,832	19,022	21,9


Քաղաքական դործադուլը , քանի ղնում՝ այնքան
 ավելի վարակիչ և դառնում : 1902 թվի նոյեմբերի 2-ի

26097

A 8930

Ռոստովի գործադուլը և այնուհետև հարավային Ռուսաստանում ծավալվող բանվորական լիթվարի հուղումների հորձանքը («մարտյան ուրերը» և 1903 թ. աժաւը) պարզորոշ կերպով նախահեղափոխական վարտաների բնույթ ևն ունենում : Ի լրումն բանվորական շարժման այդ ժամանակամիջոցում «ժամանակի նշանների» թվին պետք և վերագրել վերջապես , նաև (XIX դարի 50-ական թվականների նախառեֆորմյան բուռներից հետո) գյուղացական բողոքների առաջին լուրջ բունկումը՝ գյուղն անընդհատորեն կողոպտելու սխտեմի դեմ : Այդ բունկումները տեղի ունեցան 1902 թ. մարտ-ապրիլ ամիսներին : Գյուղացական հեղափոխական ջղաձգությունն այն պահին բունել ևր Ռուսաստանի գրեթե ամբողջ հարավը , և թեպետ այդպիսին դուրս չեր յեկել «գյուղացիական տարերային բունտի» փուլից , թեպետ չեր վերածվել դեռ ևս ագրարային հեղափոխության , այնուամենայնիվ և՛ այս կողմից ակներև ևր արդեն մտաւրում հեղափոխական փոթորիկների ահալոր նախանշանը :

Հեղափոխական շարժման տարերքը վերջապես փոխանցվեց նաև այլ խմբերին , ընդգրկելով աղատամիտ զեմստովյական խավերի զգուհ տարերրը ևս և տոանձնապես լարել դեպի հեղափոխական լողունները ջղայնորեն և զգայուն կերպով վերաբերվող ուսանողներին : Արդեն 1899 թվին ևր , վոր բարձրագույն 30 դպրոցների 25,000 ուսանողները առաջին անգամ կիրառում են քաղաքական պայքարի այն ձևը , վոր մինչ այդ կիրառվելիս և յեղել սոսկ պրոբևտարիատի կողմից—գործադուլը : 1900 թվին ի պատասխան կառավարության գործադուլի վայրէջք և խմատապուրկ



բռնութեան, վորով դինվոր տարվեցին 130 ուսանող
Կիևի համալսարանից և 30 ուսանող Պետերբուրգի հա-
մալսարանից, ուսանողութիւնը կազմակերպում և
մասնաշաղկան ցույցեր, վորի ժամանակ բանվորներն
չտապում են ոժանդակ հանդիսանալ «բուժտարար»
յերիտասարդութեան փողոցային յելուշխներին:

Իսկ ինչ վերաբերում և լիբերալներին, ապա նը-
րանք ևս, չնայած իրանց «հեղափոխական» թափի
ամբողջ չափավորութեան, նույնպէս պարտք են հա-
մարում, իրանց հերթին ևս, հավերժացնել իրանց
կապը հեղափոխութեան հետ, սեփական քաղաքական
կուսակցութիւն ստեղծելով (ծիշտ և, շատ մշուշա-
վոր) և սեփական քաղաքական անլիզալ որդան հրա-
տարակելով («СВОБОЖДЕНИЕ»), վորի շունչ ու փոփ
տվողը՝ հանդիսացավ նախկին «մարքսիստ» Պյոտր
Ստրուվին:

3. Հին «ԻՍԿՐԱՆ» ԳՈՐԾ-
ՆԱԿԱՆՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐ-
ԾՈՒՄ Ե ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ
ԾՐԱԳԻՐԸ.

Հին «Իսկրայի» չրջանը
կարելի չէ բնութենել, վոր-
պէս լենինյան կուսակցու-
թեան մէջ մարմնացված
լենինիզմի յերկրորդ չըր-
ջանը: Առաջին փուլն ա-
վարտվեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի աշ-
խատանքի հիմնական սկզբունքների հռչակումով (Լե-
նինի՝ «Ռուսական սոցիալ-դեմոկրատները խնդիրները»
բրոշյուրում, վորպիտին արտացոլում և Պետերբուրգի
«Միութեան» մէջ լենինյան խմբակի գործնական ուշ-
խատանքի կտրճատե փորձը) այլ և՛ կուսակցութեան
զաղափարի ձեւավորումով կուսակցութեան I համա-
դումարում: Կուսակցութեան պատմութեան յերկրորդ

փութի խնդիրը հանդիսացավ հին (իւլիւշյան) «Իսկրայի» առաքելությունը—կենսադործել այն բոլոր դադափալները, փորոնք հռչակված էին «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները»—բրոշյուրի մեջ: Ահա «Իսկրայի» դործունեությունը հիմնական մոմենտները:

ա) Հին «Իսկրան» գիտական սոցիալիզմի պրոպագանդն և միում բանվորական մասսաների մեջ: Այդ նպատակով նա ըստ ամենայնի մշակում և սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրը և մանրամասնորեն մեկնաբանում և այդպիսին, այլ և բանվորների մեջ ուղիղ հասկացողություններ և տարածում «արդի հասարակական—տնտեսական հանրակարգի, նրա հիմունքների և զարգացման մասին, ուստի հասարակություն տարբեր դասակարգերի, նրանց փոխհարաբերությունների և ներքին պայքարի մասին, բանվոր դասակարգի դերի մասին այդ պայքարում, այն վերաբերմունքի մասին, փոր ունի բանվոր դասակարգը գետի ընկնող և զարգացող դասակարգերը, գետի կապիտալիզմի անցյալն ու ապագան և վերջապես, պատմական այն խնդրի մասին, փոր ունին կատարելու միջադրային սոցիալ-դեմոկրատիան և ուստական բանվոր դասակարգը»^{*)}:

բ) Իր հոգեվածներում և թղթակցություններում «Իսկրան» փոչ մի բոլե աչքաթող չի անում բանվորական կյանքի դործնական, կենցաղային փնդիրները, ոգնում և բանվորներին լուծելու այդ խնդիրները, կենտրոնացնում և նրանց ուշադրությունը ձեռնարկատերերի կողմից կատարված կարեւորագույն չափա-

^{*)} Այս մեջբերումը քաղված և «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոշյուրից:

կությունների վրա, աջակցում է նրանց ավելի պարզ և գործնականորեն ձևակերպելու ձեռնարկատերերին առաջադրվելիք իրանց պահանջները, զարգացնելով բանվորների մեջ միաժամանակ նաև նրանց համերաշխության գիտակցությունը ուստական բոլոր բանվորների հետ, վորպես միասնական բանվոր դատակարգի հետ, վորն իր հերթին պրոլետարիատի համաշխարհային բանակի մասն է կազմում: Կարճ ասած, սոցիալիզմի պրոպագանդը «Իսկրան» կապում է բանվորական մասնակցների մեջ նրանց առօրյա կարիքների և պահանջների հոգի վրա մղվող յեռանդուն ագիտացիայի հետ:

դ) «Իսկրան» մի պահ անգամ չի մոռանում այն դեմոկրատական խնդիրները, վոր կան սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքի մեջ: Նա չի դադարում յերբեք մերկացնելու բացարձակապետության ոեակցիոն ելությունը, վորպես վո՛չ միայն բանվոր դատակարգի, այլև աղգարնակչության այլ խմբերի վրա ծանրացած քաղաքական ճնշման հիմնական աղբյուրի: Նա խրախուսում է ուսանողական շարժումը, առավելագույն ուշադրությունը նվիրելով նրան և դեմստվոյական—ադատամիտ սպողիցիան մղելով դեպի այն գիտակցությունը, վոր նրա շահերը ներհակ են սոլիցիական—միահեծանական բուռնցքի ոեժիմին: Ցարական չինովնիկների կողմից այս կամ այն խմբի վերաբերմամբ կատարված բռնության առթիվ յուրաքանչյուր դժվարությունը, —լինե՛ր այդ ինտելիգենտների մի խմբի կողմից արտահայտված, վորն իր կաշվի վրա յեր զգում քաղաքական ագատությունների պակասությունը, թե ադանգավորական մի մասսայի, վորը քաջածանոթ էր պորեզոնոսցեվյան վոհմակի սարսափներին, —այդ

միևնույնն է՝ իսկույն և յեթ «Իսկրայի» աղիաացիայի
առարկան եր դառնում, յեթև միայն այս կամ այն կեր-
պով ընկնում եր նրա տեսաչըջանը: Բայց առանձնա-
պես մեծ ուշադրություն եր նվիրում «Իսկրան» գյու-
ղացական խնդրին և գյուղացության հեղափոխական
շարժմանը: Այս այսպես լինելով հանդերձ, «Իսկրան»
չէր մոռանում յերբեք, վոր պրոլետարատը չպիտի
լուծվի համադեմոկրատական շարժման մեջ, վոր նրա
դերը—այդ շարժման ղեկավարության մեջ և վորպես
առաջավոր մարտիկի, վորովհետև միայն նա յե, վոր
կարող և գնալ մինչև վերջը՝ միահեծանության լիկ-
վիդացիայի և հասարակակարգի լիակատար դեմոկրա-
տացման գործում:

դ) «Իսկրան» մաքառում և այն ուղորտունիղմի,
կիսատության, անվճռականության և քաղաքական ան-
կարության դեմ, վոր նկատվում էյին վոչ միայն
սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, այլ և հեղափո-
խական և ուղղիցիոն ուրիշ կադմակերպություննե-
րում: «Ինչ անել» բրոշյուրի հեղինակի բերանով հին
«Իսկրայի» լենինիզմն արտահայտել և իր մարտաշունչ
ընավորությունը նախ և առաջ այն ավերիչ պայքա-
րում, վոր մղվել և «եկոնոմիզմի» և գլխավորապես,
նրա այն ալյաձևության դեմ, վոր դալիս եր «Рабочее
дело»-ից, վորովհետև այդպիսին ամենախորամանկ և
ամենանրբալեղու և հեռաբար՝ ամենավտանգավոր
կեղծիքն եր մարքսիզմի, քան թե «Рабочая мысль»-ի
անքողարկ լեղուն և վորովհետև մարքսիզմը նա կեղ-
ծում եր ազատամիտ և տրեդյունիոնիստական բանվո-
րական քաղաքականության գաղափարներ, վորպի-
սին ժխտում և սոցիալ-դեմոկրատիայի դերը, վորպես

բնութս լայն, հեղափոխական-մարքսիստական խմա-
տով հասկացվող քաղաքական կուսակցություն: Մա-
քսոտւմ եր «Ժսկրան» նաև «բունդյան» տիպի ոսոր-
տունիզմի դեմ (կուսակցության շարքերում հայտնված
սոցալանական թեքման դեմ): Մակայն քիչ չեն յեղել
և սյուլեմիքական այն նետերը, վոր նա ուղղել է դեպի
սոցիալիստ-հեղափոխականների բանակը, մերկացնելով
այդ կուսակցության մանր-բուրժուական ելությունը
և հեղափոխական ֆռաղների աղմուկով իրանց այդ ե-
լությունը քողարկելու եսերական տենդենցը:

յե) «Ժսկրան» և իսկրոյյան խումբը կուսակցական
տարրերի կազմակերպչական դուգման հզորագույն դոր-
ծոնն եր հանդիսանում: Նա կարողացավ թերթի և նրա
տարածման դործի շուրջն ստեղծել «Գործակալների»
ամբողջ մի ցանց, այսինքն պրոֆեսիոնալ հեղափոխա-
կանների մի խումբ, հեղափոխականների, վորոնք պետք
է, վոր ներս մտնեյին և իրոք ել մտնում եյին կուսակ-
ցական բոլոր իրարից անջատված կազմակերպություն-
ները, ամեն տեղ ել բերելով իրենց հետ իսկրայա-
թյան վոգին և նույն այդ նշանաբանի ներքո միավո-
րելով նրանց:

Դարձյալ «Ժսկրան» եր, վոր կարողացավ ստեղծել
կուսակցության կյանքի համար դարձակետ հանդի-
սացող յերկրորդ համագումարի կազմակերպչական
կոոմիտեն: Յեւ իրոք, իր իդեոլոգիական աշխատան-
քով և իր կազմակերպչական քաղաքականությամբ
«Ժսկրան» վերջ ի վերջո բերեց և հասցրեց կուսակցու-
թյունը մինչև յերկրորդ համագումարը, վորը և պետք
է ավարտեր իսկրայական խմբի յերեք տարվա այն
աշխատանքը, վոր կատարված եր կուսակցության բո-

յոր մասերը գողափարապես և կողմակերպչորեն մի-
տահանանայնելու դործի համար:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. «Իսկրա» վերահրատարակված Կուսպատի կող-
մից առաջժ 4 հատորով (№ № 1-30), 2. «Հեղափո-
խությունը և Ռեյզ(ը)՝ նյութերով և վավերագրե-
րով» (քրեստոմատիա), հատ. 2-րդ, հրատ. Կուսպատի,
3. Լենին, — յերկերի ժողովածու, հատոր 4-րդ, 4. Պ.
Լեպեշինսկի — «Կրոժկովչինայից դեպի կուսակցու-
թյունը»: Ներածական հոդված՝ 2-րդ համագումարի
արձանագրությունների վերաբերյալ, հրատ. «Պրի-
րոյի»:

III. ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒ- ԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ՝ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԵՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

(1903-1905 թվականները)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ — Հին «Իսկրան» կարողա-
ծերԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ — ցավ հաղթահարել կրոժ-
րի ՆԱԽՈՐԵՅԱԿԻՆ. կովչինան, բայց չկարո-
ղացավ արժատախիլ անել նրա բարդ կամքից անկախ
և պատմականորեն տրված այն հանդամանքները, վո-
րոնք թե՛ այն ժամանակ և թե՛ այնուհետև ծնունդ
եյին տալիս ոպորտունիստական թեքումներին, մտքե-
րի վարանումներին և յերեւումներին, մանր-բուրժուա-
կան անարխիզմի պոթկումներին և այլ հար և նման

յերևույթների կուսակցության ներսում՝ նրա պան-
 մության գրեթե ամբողջ ընթացքում: Ինչ չափով վոր
 կուսակցությունը կամափոր մի միություն և, վորն
 ընդգրկում և վոչ միայն պրոլետարիատի գիտակից
 մասի վստահելի տարրերին, այլ նաև դատակարգային
 տեսակետից անկաշու ինտելիգենտական խմբակներին՝
 նրանց դեռ չվերացած մանր-բուրժուական հոգերա-
 նությամբ,—այդ չափով ել կուսակցության մեջ միշտ
 տվյալներ կան, վոր կարող են հակակուսակցական
 հոսանքներ առաջանալ, վորպիսի հանգամանք հենց
 իրանց իսկ՝ իսկրոյականների համար միանգամայն ան-
 սոցասելի կերպով յերևան յեկալ 2-րդ համադումա-
 րում: Հետագայում բուլճիկները բոլորովին ընտելա-
 ցան արդեն այդ բանին, և Լենինը, որինակ, 1905 թ.
 վերջերին գրում եր,—«Այժմ մեր կուսակցությունը
 մեկ անգամից մասսայական և դառնում, այժմ մենք
 մեկ անգամից դիմում ենք դեպի մասսայական բա-
 ցահայտ կազմակերպությունը և այժմ մեզ մոտ կզան
 անխուսափելիորեն նաև մարքսիստական տեսակետից
 անհետևողական բազմաթիվ մարդիկ, թերևս նաև
 վորոշ քրիստոնյաներ, թերևս նաև՝ վորոշ միստիկ-
 ներ: Մեր ստոմոքներն ուժեղ են, մենք պնդաքար
 մարքսիստներ ենք: Յեւ այդ անհետևողական մարդկանց
 մենք կմարսենք»: Սակայն այսպիսի առույգ և լավա-
 տես տրամադրությունն ինքը՝ Լենինն ել եժան դնով
 ձևոք՝ չբերեց, և, վորպեսզի կարողանա բարձրանալ
 մինչ այդ առտիճանը, կուսակցությանը վիճակվեց տալ-
 րել իսկրոյականներին՝ թվում եր թե—նախընթաց աշ-
 խատանքի ընթացքում իրար լավ հասկացածներին՝ պա-

ուսկուման դատն փորձը, ինչպէս նաև հետհամադու-
մարյան ֆրակցիոն պայքարի ծանր դրաման :

Այդորինակ դրական նը-
2. ԻՍԿՐԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ փաճումների շարքում պի-
ԴՐԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ տի դատել նախ և առաջ
II-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ համադումարի պատգամա-
վորների խոչորագույն մեծամասնության միասնականա-
ցումը ծրագրային խնդիրներով (համադումարին
ներկա եյին քսան և վեց կազմակերպություն ի դեմս
ներանց քառասուն և յերեք պատգամավորների՝ վճռա-
կան ձայնի իրավունքով և բացի այդ ներկա եյին ևս
տասն և չորս պատգամավոր՝ խորհրդակցական ձայնի
իրավունքով) : Այդ հսկայական մեծամասնության հան-
դեպ ոպողիցիա կազմեցին սոսկ «Իսկրայի» կողմից
ջախջախված եկոնոմիզմի բեկորները (ոռւսական սո-
ցիալ-դեմոկրատների արտասահմանյան միության
դույզ ներկայացուցիչները և մեկ ներկայացուցիչ եւ-
Պետերբուրգի բանվորական կազմակերպությունից)
և բացի այդ՝ նաև Բուռգի ներկայացուցիչները, վո-
րոնք համառ դիրք եյին բռնել իսկրոյանների դեմ
դիտավորապես Բուռգի դրությունը կուսակցության
մեջ վորոշելու խնդիրների վերաբերմամբ : Յեւ վնույն-
պեսի համերաշխությամբ միարանվեցին համադումա-
րի անդամները նաև «Իսկրայի» գաղափարական ծառու-
յությունները դեահատության յենթաբկելու և ճանո-
չելու խնդրում : Վոչ այդպիսի սեղմ մեծամասնու-
թյամբ, բայց և այնպես «Իսկրայի» կողմնակիցների ուկ-
ներև դերակշռությամբ լիկվիդացիայի նշանի յ տակ
դրվեց կուսակցության մեջ մինչ այդ ժամանակներն

իշխող կրթական, վերացրեց առանձին կազմա-
կերպությունների ինքնուրույն դոյությունը (ինչպես,
որինակ, «Հարավային բանվորը») և կուսակցության
կանոնադրության նշանի ներքո վորոշ չափով հնարա-
վոր յեղալ միասնականացնել նրա առանձին-առան-
ձին մասերը:

3. ԻՍԿՐՈՎՅԱՆՆԵՐԻ ՊԱ-
ՌԱԿՏՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԴՐՈՒ-
ԹՅԱՆ § 1-Ը ՔՆՆԵԼԻՍ ՅԵՎ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԳԱ-
ՄԱՎՈՐՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՏ-
ԿԵՐԸ ԿՈՒՍԱԿՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ-
ՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱ-
ՀԻՆ:

Սակայն, խսկրովյան-
ների միասնականությունը
չգիմացալ քննության հենց
առաջին իսկ կազմակերպ-
չական խնդիրը քննության
առնելիս՝ պրոլետարական
կուսակցության ելության
մասին սկզբունքային առ-
սակեանքը պարզելու կա-
պակցությամբ: Տեսակետ-

ների խոշոր տարածայնության աղպիսի մի կետ հան-
դիսացալ կանոնադրության § 1-ը: Կարո՞ղ և արդյոք
կուսակցության անդամի անունը կրելու հավակնու-
թյունն ունենալ ամեն վոք, ով աղպիսի ցանկություն
կունենա, ընդունելով նրա ծրագիրը և ուժանդակելով
նրան նյութապես, ինչպես նաև անձնական կանոնա-
վոր աջակցություն ցույց տալով նրան՝ կուսակցու-
թյան կազմակերպություններից մեկն ու մեկի՝ ղեկա-
վարությամբ (§ 1 ըստ Մարտովի նախագծի), թե՞ դրա
համար անհրաժեշտ և տվյալ կուսակցականի անձնա-
կան մասնակցությունը կուսակցական կազմակերպու-
թյուններից վորևե մեկում (ըստ Լենինի նախագծի),
— փյույեա եր, ահա, վոր խնդիրը ծառացալ համա-

դումարի պատգամաւորների առջև, բաժանելով նրանց
յերկու մասի: Թվում եր, թե առաջին հայացքից փոք-
րիկ այս տարաձայնութիւնը կանոնադրութեան կետե-
րից մեկի վերաբերմամբ այնքան ել կարեւոր մի բան
չէ, փոքր բա համար հարկ լինե՞ր խկրովյաններին տար-
րեր կողմերը ցրվել և այն ել այնպիսի մի կարեւորա-
դույն մոմենտին, յերբ ամփոփում եր արվում խկրով-
յան յեռամյա աշխատանքին և յերբ այդ ամբողջ աշ-
խատանքը պետք և պսակվեր իրապես սոցիալ-դեմո-
կրատական, միասնական, հզոր պրոլետարական կու-
սակցութիւն ստեղծելու ախտով:

Իրականում, սակայն, այլ բան դուրս յեկաւ:
Կանոնադրութեան առաջին կետի շուրջ ծագած վիճա-
րանութիւնները յելակետ հանդիսացան հենց իրենց
խոկ խկրովյանների մեջ գոյութիւն ունեցող տարա-
ձայնութիւնները դրսևորելու համար, ինչպես պրո-
լետարական կուսակցութեան բնութեան, այնպես ել
նրա դերի և նշանակութեան վերաբերմամբ: Վիճաբա-
նութիւնների ընթացքում, արդեն համադումարում
սկսեցին պարզորոշվել հետագա կազմակերպչական ու
պորտունիզմի գծերը: Մենչևիեկական ուպորտունիզմի
ապագա պարագլուխներ—Մարտովը և Ակսելրոդը—Լե-
նինի ազդեցութիւնից ազատազրկելու ուպորտունիս-
տական պահանջից թելադրված բռնե՞ն կրքոտութեամբ
սկսեցին գծել իրանց համադումարյան ճառերում կու-
սակցական կազմութեան այնպիսի հեղհեղուկ և անորոշ
նկարներ, հին խկրայականութեան կազմակերպչական
սկզբունքների այնպիսի մի աղավաղումն՝ ամբահա-
տատ, միաճույլ, կենարոնացված և յերկաթե կարգա-
պահութեամբ գոգված մի կուսակցութիւն ստեղծելու

դործում, վոր Լենինը չեր կարող դրա համար դեմ
չադատամբվել: Նրանք այնպիսի յեռանդով սկսեցին
կախ ընկնել ոպորտունիստների համար սովորական
դորձած կուսակցական դեմոկրատիզմի գաղափարների
սղջից՝ ի հակադէիտ ցենտրալիզմի գաղափարին և այն-
քան սկսեցին լայնացնել կուսակցականութեան չըջա-
նակները, ցանականալով, վոր կուսակցութեան բաց
դռներէց կարողանա ներս մտնել ուղեկիցների շարքից
յեկող ամեն մի գործադուլավորն ու ամեն մի ինտե-
լիգենտը (լինի դա զիմնագիտութե՝ պրոֆեսոր—միւս-
նույնն և), վոր Լենինը չեր կարող ուշադրութեանը
չլարել և չեր կարող ամեն ջանք չգործադրել, վոր-
պէտքի սանձահարված, բայց դեռևս վերջնականապես
լիկվիդացիայի չենթարկված և Մարտովի աղմկալի յե-
լույթից հետո նորից չունչ ու թե առած ոպորտունիզմի
այդ նորահայտ մարգարեները՝ դեմ յեղնելով «խորայի»
որսդիցիոն գծի դեմ—տեր ու տնորեն չգտնան կու-
սակցութեան կենտրոնական մարմիններում:

Յեւ այսպիսով կուսակցութեան ԿՈ խմբադրու-
թեան և ԿԿՈմի ընտրութեան տահին համագումարում
բռնկված այդ պայքարը ծայր աստիճան սուր բնա-
վորութեան ստացալ: Կանոնադրութեան § 1-ի խորնո-
րում, այսպես կոչված «ճահճի» և համագումարի ա-
ջակողմեան պատգամավորների ոգնութեամբ հաղթող
Մարտովն այնուհետև պարտութեան կրեց Կենտրոնա-
կան մարմինների ընտրութեան ժամանակ՝ «Ռաբուչե-
դեյցինների» (Մարտինովի և Ակիմովի) և հինգ բուն-
դովյանների համագումարից հեռանալուց հետո: Սա-
կայն, նա չկամեցաւ հաշտվել համագումարի վորո-
շումներին, քաղաքական հիպոթերիկայով արձագանքեց

իր կրած պարտությանը և դեմոնստրատիվ կերպով հրոժարվեց մանեւ համագումարում ընտրված խորհրդարան յեռյակի կազմի մեջ: Այսպիսով եւ, ահա, հիմք դրվեց ապագա ֆրակցիոնական պայքարին և կուսակցութեան հետագա պառակտման:

4. ՀԵՏ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՅԱՆ «Մեծամասնութեան» և ՊԱՅԲԱՐԻ ԲՆՈՒԹԹԸ. «փոքրամասնութեան» միմիջև համագումարից հետո բռնկված պայքարը արտաքուստ սկսեց ընթանալ, ինչպես կարծում եյին Մարտովը և ընկ. յայն «ուղղումներէ» մակարդակի վրա, վորոնք անհրաժեշտ եր անել համագումարի «միակողմանի» վորոշումների մեջ՝ կուսակցութեան կենտրոնական հաստատութեանների կազմի վերաբերյալ: Ընդամին «փոքրամասնութեանը» հարձակվող կողմ եր դարձել, իսկ «մեծամասնութեանը»—պաշտպանվող: Դեպքերի ընթացքը պայմանավորված եր հետեյալ մոմենտներով: Մենչեիկները նվաճում են առաջին դիրքը—արտահամայն Լիգան: Պլեխանովի դեպի մենչեիկների բանակին անցնելուց, և ԿՈ խմբագրութեան կազմից հեռանալուց հետո, «Իսկրան»—սկսած № 53-ից—ընկնում և մենչեիկների ձեռքը, իսկ դրա հետ միասին և կուսակցութեան խորհուրդն եւ մենչեիկական պայքարի դործիքն և դառնում: Լենինը («գալյորկայի» արտահայտութեամբ) «դիրք և մտնում» Կենտրոնական Կոմիտեյում: Սակայն, պարտութեանից հետո փոխված Կենտրոնական Կոմիտեյի կազմը դուրսացնում և մենչեիկների համար նաեւ այդ դիրքի դրավումը:

Այսպիսով ըուչեիկներն ստիպված են լինում կամացկամաց զիջել մարտովյաններին իրանց բոլոր հենակետե-

րը, իրանց այն բոլոր կազմակերպչական ամբողջները, վորտեղ նրանք կանգնեցված են յեղև յերկրորդ համա-
դումարի կողմից, վորպես նրա կամքի արտահայտիչ-
ները: Համադումարից հետո կուսակցութեան ներսում
բռնկված պայքարը դեռ յերկար ժամանակ պտտվում
էր «կոստացիոն» խնդիրների շուրջը, չնչափելով վո-
րեւ խոշոր տարածայնութիւններ: «Խժբժանքների և
սկզբունքային տարածայնութիւնների միջև անջրպետ
անցկացնելու դժվարին խնդիրը,—գրում է Լենինն իր
«Քայլերում»,—ներկայումս լուծվում է ինքն իրան.
այն, ինչ վոր վերաբերում է կոստացիային,—խժբժանք
և, իսկ այն, ինչ վոր վերաբերում է համադումարի ժա-
մանակ տեղի ունեցած պայքարին, § 1-ի շուրջը ծագած
վիճաբանութիւններին և դարձին դեպի ոպորտունիզմն
ու անարխիզմը—սկզբունքային տարածայնութիւն և:
Նոր «Ժսկրան» դարձավ ամէլի մեծածավալ և առավել
չատախոս, քան հին «Ժսկրան», սակայն ասել, թե այդ-
պիսով նա մի բան չահեց իր տեսակետներն ամէլի պար-
զորոշ կերպով արտահայտելու կարողութեան տեսակե-
տից,—չէր կարելի:

Ահա թե ինչպիսի բաներով է բնորոշում նոր «Ժսկ-
րայի» դեմքը ինքը՝ Վլադիմիր Իլյիչն իր «Քայլե-
րում».—

«Հին «Ժսկրան» հեղափոխական պայքարի ճշմար-
տութիւններն էր ուսուցանում, մինչդեռ նոր «Ժսկրան»
ուսուցանում է կենցաղական իմաստութիւններ—գիջո-
ղականութիւնն ու յոլա գնալը: Հին «Ժսկրան» ռազմա-
չունչ և մարտական սրթութեամբի սրգանն էր, մինչ-
դեռ նոր «Ժսկրան» ոպորտունիզմի գիտացն է հրամցը-
նում մեզ՝ գլխավորապէս—կազմակերպչական խնդիր-

ների ասպարիզում : Հին «Իսկրան» վաստակել էր բոլոր թե՛ ուստական և թե՛ արեմտյան—չեմբոսական ոսկոր—տունխտաների իր համար պատվարեր անհամակրանքը , մինչդեռ նոր «Իսկրան» խելքացել և և չուտով արդեն այլևս չի ամաշի և չի քաշվի այն դո—վասանքներից , վոր նրա հասցեյին չուայում են ծայրահեղ սպորտունխտաները : Հին «Իսկրան» հաստատ և անչեղորեն առաջ էր բնթանում դեպի իր նպատակը , և նրա խոսքն ու գործն իրար հա—կասող և մերժող չէին , մինչդեռ նոր «Իսկրայի» մեջ նրա բռնած դիրքի ներքին կեղծիքը—անկախ նույնիսկ վորեն մեկի կամքից ու դիտակցությունից—ծնունդ և տայիս միմիայն քաղաքական կեղծավարության :

«Վորպեսի՛ խայտառակություն : Ինչպե՛ս վարկա—րկեցին և խայտառակեցին նրանք մեր հին «Իսկրան» , — դառնորեն ավարտում ե Վրացիմիր Իլյիչն իր այս յեր—կու «Իսկրանների» համադրությունը :

5. ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ Պարավելով սկսկային և ԿՈՂՄԻՑ ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐԸ կոոպտացիոն այն պայքա— ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ իր ասպարիզում , վոր հա— ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ . մագումարից հետո ծավալ—վեց ժնեում , խլչեկիները , սակայն զգում եին , վոր տյնուամենայնիվ Ռուսաստանի դիտակից պրոլետարիա—տի հսկայական մեծամասնության հասարակական կար—ծիքի և կամքի արտահայտիչն իրանք են հանդիսանում : Այս խիկ պատճառով արտասահմանի մենչեկիները հեռ մի ընդհանուր լեզու գտնելու համար թախած ապար—դյուն քանքերից հետո , նրանք իրանց յեռանդի ամբողջ ուշիկն ու թափը գործադրում և կենտրոնացնում են յեր—

ընդ համապատասխան հրավերելու նպատակով մզվող պայքարի վրա այն յենթադրությամբ, թե միմիայն այդ հեղինակավոր ինստիտուտն է, վոր ի վիճակի յե վերջ տալու ներկուսակցական այն սկոկային պայքարին, վորը փաստորեն ամբողջ կուսակցությունը պառակտման է հասցրել: Մինչդեռ մենչեիկները յերրորդ համադումար հրավերելու մասին լսել անգամ չեն կամենում: Խորհրդի մեծամասնությունը (Պլեխանովը, Մարտովը և Ակսելրոդը) չձուլականապես համադումար հրավերելու դեմ են արտահայտվում: Վորպեսպի կարողանան իրականացնել համադումար հրավերելու համար ազդեցիկ մղելու իրավունքը, բուլչեիկները պետք է ձեռք բերեյին մամուլի սեփական սրգանը («Վոլերյուդ»):

Ռուսական քսան է ութ կոմիտեներից, վորոնք իրավունք ունեյին մասնակցելու համադումարին, քսան է մեկ կադմակերպությունը (այսինքն՝ բոլոր կոմիտեների յերեք-քառորդական մասը) 1905 թվի մարտ ամսին արտահայտվեցին ի նպատակ համադումար հրավերելուն, վորախին է վերջի վերջո կայացավ 1905 թվի մայիսին՝ բոյկոտի յենթարկված լինելով, սակայն, մենչեիկները կողմից: Սակայն, այդ պահից բուլչեիկները նորից վերականգնեցին իրանց կադմակերպչական դեմքը, մի հանդամանք, վոր ավելի քան ժամանակին էր, վորովհետև հեղափոխությունը արագացված թափով վրա յեր հասնում, մինչդեռ մենչեիկներն իրանց նոր «Իսկրայով» ամենից քիչ էյին պետքական գլխավորելու համար ցարիզմի դեմ պայքարի յեւած է հեղափոխականորեն-տրամադրված պրոլետարիատին:

6. ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿ- Հակահուսակցական տար-
 ծՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ րերի դեմ պայքար մղելու
 ՅԵՐՐՈՐԴ ՓՈԻԼԻ ԴԱՍԵ- փորձով լենինիզմը հարըս-
 րԸ. տացալ արդեն իսկ մեծ և

ձևականորեն միասնական սոցիալ-դեմոկրատական կու-
 սակցության չրջանակներում։ Նա շատ և շատ ուժեր
 կորցրեց և ջանքեր թափեց, վարպետի կարողանա «մար-
 սել» մարտովականությունը կուսակցության ներսում,
 սակայն, հավատարիմ մնալով հեղափոխական պրոլե-
 տարիատի դործին և պահպանելով հեղափոխական
 մարքսիզմի սկզբունքների մաքրությունը, նա նորից
 դալիս և հասնում և հին «Խակրայի» իմաստուն կանո-
 նին, — նախքան միանալը («եկոնոմիզմի» չարունակող-
 ների — մենչևիկների հետ) անհրաժեշտ և սահմանադա-
 վել։ Ինքն իր բախտին թողված մենչևիզմը, ալպիսով,
 վերջնականապես խեղդվում և ուղորտյունիստական
 ճահճում, իսկ նորից իր ամրահաստատ վտակներին կանգ-
 նած բուլչեիզմը բնականաբար պրոլետարական ամենա-
 լայն մասսաների առաջնորդն ու ղեկավարն և դառ-
 նում։

ԴՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. «Ռ.Ս-Դ.Բ. Կ. II համագումարի արձանագրու-
 թյունները», հրատ. «Պրիբոյի», 2. Հեղափոխությունը
 և ՌԿ(Բ)Կ. նյութերով և վավերագրերով», հրատ. կուս-
 պատի, հատ. II (գլուխներ—VIII և IX), 3. Լենին—յեր-
 կերի ժողովածու, հատ. V, 4. Պ. Լեպեշինսկի—«Կու-
 սակցության II համագումարը», հրատ. «Պրոլետարի»,
 5. Վ. Նեվսկիյ—«Կուսակցության III համագումարը»,
 հրատ. «Պրոլետարի»։

IV. ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԴԻՐՔԵ- ՐՈՒՄ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՈՑԵՐԻ ՄԵՋ

(1905—1907 թվակ.)

1. ԴԵՊՔԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ Հեղափոխության պատ-
ԸՆԹԱՑՔԸ ՀԵՂԱՓՈԽՈՒ- կերն սկսվում և բացվում և
ԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ. մարդկության պատմու-
թյան մեջ առհավետ անմո-
ռանալի 1905 թվի հունվարի 9-ի արյունոտ կիրակիով :
Հունվարի 9-ից հետո պրոլետարիատը վերադառնա-
կարգ, ամբողջ մեկ գլխով մեծանում և և այլևս դա-
դարում և միամտորեն թագավորի բարյացակամությանը
հավատալ : Արյունոտ այդ կիրակիվան պատասխանը
հանդիսացավ պատմության մեջ չտեսնված դարձադուր-
ների հորձանքը, վերադարձին քանի դնում, այնքան ավե-
լի և ավելի յե բարձրանում, սպառնալով խեղդել ամ-
բողջ ինքնակալությունը : Հեղափոխությունը պարզա-
պես անց և կենում այնպիսի, — թող թույլ արվի առիկ, —
«սահմանադրական» վիժվածքի կողքից, ինչպիսին և բ
Բուլլիպինյան սրինախորհրդակցական դուման (վերը
հենց այդպես ևլ մնաց սոսկ վերադառնալի նախագիծ) և
ցարական կառավարության ձեռքից բացահայտորեն
խլում և՝ ընդհանուր դարձադուրի միջոցով՝ մի հրո-
վարտակ, վերադարձին Պետական Դումա յե խոստանում
տալ : Դրանից հետո փոքր ինչ կարծես թե կարժամ
քաղքենիության զգալի մասը հանդստանում և, և հե-
ղափոխության պրոցեսում հեղափոխության և հակա-
հեղափոխության ուժերի մեջ ստեղծվում և վերոջ հա-
մասարակչության մի մոմենտ : Այնուհետև հակահե-
ղափոխությունն անցնում և հարձակման (1905 թվի

աշնան ջարդերը), իսկ հեղափոխությունն այլ հարձակմանը պատասխանում է Մոսկւայի դեկտեմբերյան տպատաժությամբ: Վոչ լիովին և վոչ ժամանակին ոտանալով դյուղացության աջակցությունը, պրոլետարիատը սկսում է 1906 թվին արդեն հոգնածության փորոշ նշաններ ցույց տալ: Լերերալները և նրանց պաշից կախ ընկածներն ամեն կերպ աշխատում են հեղափոխական պայքարի ծանրության կենտրոնը փոխադրել գեղի պարլամենտական տապալակը, սակայն հենց այստեղ, այս ճակատում, ցարական կառավարությունը կարողանում է դյուրությամբ վոլոքել-կաղևտական Փոռնդայի վիզը և արհամարհանքով դեն և չպրտում նրան իր վոտքի հարվածով (I և II Պետական Դումաների արձակումը): 1907 թվի հունիսյերեքյան հեղաշրջումը գալիս է նշելու ուստական մեծ հեղափոխության փառճանը և հակահեղափոխական աղջամուղջի թանձրացումը:

Պրոլետարիատի և մասամբ ել դյուղացության հեղափոխական վիթխարազույն յետանգի զարգացմամբ պայժանավորված հեղափոխական անցքերի ուղեկալով ընթացքը ամենից լավ կարող է ընտրոջվել հետեյալ թվերով. —

**Գործադուլավորների թիվը (հազարներով) տարվա
յուրաքանչյուր քառամյակում**

Այդ թվում՝ 1. ընդհանուր 2. զինվորական 3. քաղաքական 4. քաղաքական 5. քաղաքական 6. քաղաքական 7. քաղաքական 8. քաղաքական 9. քաղաքական 10. քաղաքական	1905				1906				1907			
	I II III IV				I II III IV				I II III IV			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Ընդամենը	810	481	294	1277	269	479	296	63	146	323	77	193
Տնտեսական	411	190	143	275	73	222	125	37	52	52	66	30
Քաղաքական	399	291	151	1002	196	257	171	26	94	271	11	163
Գյուղացական շարժ մամբ ընդգրկված գավառների տոկոսը	14,2		36,9		49,2		21,1		—		—	

Այս աղյուսակից յերևում է, թե հունվարի 9-ից հետո բարձրացած հեղափոխական հորձանքը 1905 թվի վերջում ինչպիսի վիթխարադույն «իններորդ ալիքի» յե վերածվում (ապշեցնում է նախ և առաջ քաղաքական դործադուլների արտասովոր աճումը տարվա IV-րդ քառամյակում ընդդեմ III քառամյակի 150 հազարի)։ 1906 թվի սկզբին այդ ալիքն ընկնում է, նորից վեր բարձրանալով II քառամյակում, վորից հետո հեղափոխությունը բացահայտորեն դնում է դեպի նվազումը։ Հետաքրքրական է այստեղ այն հանգամանքը, վոր գյուղացական խռովությունների մաքսիմումը տեղի յե ունենում վոչ թե պրոլետարական հեղափոխության կուլմինացիոն կետի հետ միաժամանակ, այլ վորոշ հապաղումով կես տարի ժամանակով, վորպիսի հանդու-

մանքը չեթ կարող ճակատագրական հետեւանքներ չունենալ հեղափոխութեան բախտի համար :

Թեպետ և 1905—1907 թվականների հեղափոխութիւնը ջախջախւեց, սակայն նրա նշանակութիւնը հեղափոխական շարժման ընդհանուր ընթացքի մեջ հսկայական էր, և պրոլետարիատի նվաճումները հեղափոխութեան պահին Վլադիմիր Իլյիչի կողմից բնորոշվում են հետեւյալ նշանակալից խոսքերով. —

«Յերեք տարի տեղ (1905—1907 թ.) հերոսական պայքարով ռուսական պրոլետարիատը կարողացավ նրվաճել իր և ուրիշ ժողովրդի համար այն, ինչի նվաճելու համար այլ ժողովուրդները տասնամյակներով ելին աշխատել: Նա կարողացավ նվաճել բանվորական մասների ազատագրութիւնը դավաճան և ատելիորեն—վոյորմելի լիբերալիզմի ազդեցութիւնից: Նա նվաճեց իր համար հեգեմոնի դերը հանուն ազատութեան և զեմուկրատիայի մղվող պայքարում, վորպիսին սոցիալիզմի համար ծախարվող պայքարների նախապայմանն է հանդիսանում: Նա կարողացավ նվաճել Ռուսաստանի ճշմարտ և շահագործված մասսաների համար հեղափոխական մասնաշաղկապ պայքար մղելու կարողութիւնը, առանց վորի աշխարհումս և վոր մի տեղում վորեւ լուրջ բան չի նվաճվել մարդկութեան հառաջադիմութեան ասպարեզում: Յեւ այս նվաճումները, ահա, ռուսական պրոլետարիատի ձեռքից հետ խլել չի կարող այլեւ և վոր մի ռեակցիա, լիբերալների և վոր մի ատելութիւն: Հարութիւն ու հայհոյանք: Այդ նվաճումն այլեւ չեն կարող հետ խլել նրանից սոցիալիստական ռպորտյունիստների վոր վարանումները, վոր

կարճատևությունը և վր' էլ նրանց թերահավատու-
թյունը» :

2. ԲԱՏԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՎ Նորախակրայականների ու-
ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻ պոքաունիտական ինքնու-
ԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԱՅՈՒ- բուշումը չուտով մզեց նր-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՂԱՓՈ- բանց կաղմակերպչական
ԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ- խնդիրների առաջաբեկից
ՏՈՒԹՅԱՆ ՄՈՄԵՆՏԻՆ . դեպի . ուղորդունիղմը նաև

կուսակցության առաջադրած , այն խըն-
դիրների վերաբերյալ , թե ինչպես պետք է ղեկավարել
պրոլետարիատին հեղափոխական պայքարների ուղ-
մադաշտում : Դեռևս 1904 թվի նոյեմբերին էր , վոր
նոր «Իսկրայի» միջից հանկարծ դուրս ցցվեց իսկական-
մենչեիկական մի դեմք՝ պարզորոշ կերպով արտա-
հայտված և ծաղկուն ուղորդյունիղմի գծերով : ԿՈ խըմ-
բադրությունը չըջարեւական մի նամակ ուղարկեց ,
վոր հասցեյադրված էր «միայն կուսակցության ան-
դամներին» և վորի մեջ ծավալված էր դեմադրոյական
խմբադանիայի պլանը : Բանվորների մասնաշաղկան յե-
լյութները փողոցներում (ինչպիսին էր , որինակ , Ռոս-
տովի նշանավոր ցույցը) մասսաները մորիլիդացիայի
լենթարկելու սատրին կարգի ձևեր էյին հայ-
տարարվում և պրանց փոխարեն առաջարկվում էր ան-
հատ բանվորների յելյութները դեմադրոյական լիրե-
րալիերի բանկետներում , վորպիսի հանդամանքը , իրր
թե «բանվորական մասսաների կողմից հասարակական
կյանքին» (6) պլանաչափ կերպով միջամտելու» նոր ճա-
նապարհի վրա «այսպիսի քայլը» պիտի հանդիսանար ,
նախադրյալն ունենալով «ուպուլիցիոն բուրժուայիտ-

յի ձախ թևի ներկայացուցիչները հետ կնքած համա-
ձայնությունը և միջոցներ ձեռք առնելը, վոր «խու-
ճապային սարսափ չստեղծվի զեմաստվոյական դործիչ-
ները չարքերում»...

Լենինն իր ժամանակին խստորեն քննադատության
յենթարկեց նորախերայական այդ «զեմաստվոյական
կամպանիան», և հենց այն պահից արդեն պարզորոշ
կերպով նշվեցին սոցիալ-զեմոկրատական յերկու տակ-
տիկան,—սոցիալ-զեմոկրատական Ժիրոնդայինը և սո-
ցիալ-զեմոկրատական հեղափոխական Լեոնը։ Այդ յեր-
կու ուղղություններն արդեն վերջնականապես բաժան-
վեցին Լոնդոնում յերրորդ համագումարի ժամանակ
բոլշևիկական բանաձևեր ընդունելիս և դրա հետ միա-
ժամանակ Ժնևում մենչևիկական կոնֆերանսի բանա-
ձևերն ընդունելիս :

Ժիրոնդիստական կոնֆերանսը վախենում և
հանրապետություն բառն անգամ արտասանելուց, հարց
չի հարուցանում հակահեղափոխական ուժերի դեմ
պայքար մղելու մասին և տալիս և պայքարի պրոցեսի
սոսի այն ընդհանուր նկարագրությունը, ինչպես վոր
այդպիսին պատկերանում և բանաձևի հեղինակներին
և հրաժարվելով մասսաներին այնպիսի ախուռալ լո-
յունքներ տալուց, վորոնք կարող կլինեյին ոգնել պը-
րոխտարխատին ատաջ ընթանալ և խփել ու կործանել
հին կարգերի Բառալը։ Ժողովրդին զինելու լոգունգը
ևս ահաբեկում և մենչևիկական ժերոնդային, հարկա-
զրելով նրան իր նոր «Խոկրայի» եջերից՝ ի հակահչիու
բոլշևիկական «Վպերյուդ» թերթի թոթովել այն մասին,
թե «անհրաժեշտ և զինել ժողովուրդը միմիայն մեկ ան-
փոխարինելի գինքով—միահեծանության դեմ հարձակ-

վելու այրող պահանջով և ահա՝ այդ նպատակի համար ղինվելը»։ Հրաշալի մի Փորձուլ, դասական դարձվածք — «զինել ժողովուրդը... ղինվելու պահանջ»... Այդ Փորձուլի մեջ արտահայտվել է մենչեիզմի ակբողջ ժիրոնդիստական ելությունը։ Ժամանակավոր կառավարութեան խնդրի վերաբերմամբ մենչեիկական միտքն այդ՝ ապադայում «հնարավոր» կառավարութեան պահանջից այն կողմը չի գնում. մի կառավարութեան, վոր կարող կլինի «կարգավորել» ներհակ դասակարգերի միջև տեղի ունեցող փոխադարձ պայքարը (արտադասակարգային կամ՝ վերադասակարգային կառավարութեան զարմանալի մի նմուշ է այս!), ինչպես նաև «մաքառել նրա այն Փակտորների դեմ, վորոնք սպառնում են կապիտալիստական հասարակակարգի հիմունքներին» (այս արգեն անմիջական թելադրանք է հեղափոխական ժամանակավոր կառավարութեանը — պայքարել այնպիսի մի հակակապիտալիստական Փակտորի դեմ, ինչպիսին են պրոլետարները)։ Իսկ ինչ վերաբերում է սոցալ-դեմոկրատների մասնակցութեանը ժամանակավոր կառավարութեան մեջ, ապա այդ առթիվ մենչեիկները տալիս են անվերապահորեն (այսինքն՝ բոլոր պայմանների և հանգամանքների համար անխտիր) բացասական, մերժողական պատասխան, վորն ասում է. — «Մոցալ-դեմոկրատիան նպատակ չը պիտի դնի իշխանությունը դրավելու կամ թե՛ բաժանելու այդպիսին ժամանակավոր կառավարութեան մեջ, այլ նա պետք է մնա վորպես հեղափոխական ծայրահեղ ոպպոզիցիայի մի կուսակցութեան»։ Ինչպես հայտնի է, մենչեիկները հավատարիմ մնացին այդ լոզունգին նաև 1917. թվի հոկտեմբերին։

Այդպէս չեւ, սակայն, բուլղերիկներէ դէրքը կու-
սակցութեան 3-րդ համագումարում, վորտեղ նրանք
ոուր և պարզորոշ կերպով հարց եյին հարուցանում.—
1. Դեմոկրատիկ հանրապետութեան մասին, վորպիսին
ավարտումն պիտի հանդիսանար ինքնակալութեան լիա-
կատար լիկվիդացիան նպատակ դնող հեղափոխութեան,
2. Ժամանակավոր կառավարութեան մասին, վորպիս
հաղթական հեղափոխութեան անհրաժեշտ մի փուլի,
3. Այն մասին, վոր բանվոր դասակարգը պետք և տիրի
հեղափոխութեան այդ մարմիններին և բնով չհեռանա
նրանցից, 4. այդորինակ տիրութեան յեղանակների մա-
սին (նպաստավոր հանգամանքների դեպքում թույլա-
տրելի յե նաև վոր սոցիալ-դեմոկրատիայի ներկայացու-
ցիչները նույնպէս մասնակցութեան ունենան ժամանա-
կավոր կառավարութեան կազմի մեջ) և վերջապէս՝
5. այն պայմանների մասին, վորոնք վորոշում են
բանվոր դասակարգի ինքնուրույն շահերի պաշտպա-
նութեանը (կուսակցութեան խիստ վերահսկողութեան
նր ժամանակավոր կառավարութեան կազմի մեջ գըտ-
նվող իր լիազորների նկատմամբ և, դրանից անկախ՝
պրոլետարական մասսաների մեջ պրոպագանդ մղելն այն
ուղղութեամբ և հանուն այն դադափարի, թե՛ այդ կա-
ռավարութեան վրա մշտական ճնշում պետք է դործա-
դրվի սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեան տակ
դռնվող դիմումը պրոլետարիատի կողմից) :

3. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ- Ռուսական սոցիալ-դե-
ՅԻ ԵՆԵՐԿՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ ՀԵ- մոկրատիայի Ժիւրոնդայի
ՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑ- և Լեւանի տակտիկական
ԲՈՒՄ .

դժերի հետագա անջատու-
մը ուղեկցում եւ այնուհետև ծավալվող հեղափոխու-

թյան ամբողջ ընթացքին : Բուլչեիկները և ժենչեվիկ-
 ները մ՛ջև յեղած տարածայնությունների հիմնական կե-
 տերը հետևյալներն են .—1) Այն խնդրի վերաբերմամբ ,
 թե հին ութիմի դեմ պայքարելիս պրոլետարիատն ում
 հետ պետք է առաջ ընթանա ,—բուլչեիկները հաստատո
 ւ են չլորեն պնդում ելին , վոր՝ հեղափոխականացող
 դյուղացության հետ , վորի չահերը շարունակարար
 մատնվում ելին սուր և կեղծավոր բուրժուալիայի
 կողմից և վորն անշուշտ կհետևի հեղափոխական
 պրոլետարիատին , վորի վճռական լուղունդն է—պայքար
 հանուն աշխատավորների իշխանության և հոգի համար
 (կալվածատիրական հողերը գրավելու և ամբողջ հողը
 պետականացնելու մասին պարզորոշ կերպով խնդիրը
 դրվեց և պաշտպանվեց բուլչեիկների կողմից Ստոկհոլմ-
 մի 4-րդ կոնֆերանսում) : Մենչևիկները կանգնած ելին
 այն տեսակետի վրա , վոր պրոլետարիատը վաճն պետք
 է կնքի լիբերալ բուրժուալիայի հետ և իրանց ամբողջ
 տակտիկան կառուցանում ելին այդ սկզբունքի վրա :
 2) Այստեղից ել ըլիտում եր տարբեր վերաբերմունքը
 դեպի կադետական դումաները : Բուլչեիկները դեմ են
 կանգնում կադետներին ոժանդակելուն և կոպմակիյ
 են դյուղացության վրա տարածված հեղեմոնիան տա-
 պալելուն : Մենչևիկները , սակայն , կոպմակիյ են
 բուրժուալիային ոժանդակելուն և աջակցելուն : 3)
 Պայքարի մեթոդների խնդիրների վերաբերմամբ դուր-
 ծեկակերպն արտահայտվում է այսպես .—բուն թա-
 փով վեր բարձրացող հեղափոխական ալիքի շրջանում
 բուլչեիկները լուղունդ են արձակում բոյկոտելու չինով-
 նիկական կոնստիտուցիոնալիզմի (սահմանադրականու-
 թյան) այնպիսի խառնածին սլուզը , ինչպիսին է , ո-

բինակ, Բուլղոլինյան դուժան, իսկ մենչևիկները ապահարար կառնում են ցարական կառավարությունից ժողովրդին տված այդ «ընծայից» և լրջորեն աղմուկ ու շփոթ են բարձրացնում նրա չաւրջը, պատրաստություններ տեսնելով ընտրական ինչ վուր կամպանիայի համար: Բուլչևիկները կանգնած էյին դուժայից դուրս պայքար մղելու տեսակետի վրա դինված ապստամբության մեթոդներով (ինչպիսին եր, սրինակ, Դեկտեմբերյան ապստամբությունը Մոսկվայում): Մինչդեռ մենչևիկները շարունակ գովացնում էյին հեղափոխությունն իրենց ծերունական հոռետեսության հովհարով և ջանում էյին լսիալիզացիայի յենթարկել հեղափոխական հրդեհները, փոխադրելով սրբուխտարիատի և ցարիզմի պատմական վեճի ծանրության կենտրոնը դեպի Տափրիկյան պայտի հոռետրական ամբիոնը: Է) Յերբ վուր հեղափոխությունն սկսեց թեքվել դեպի անկումը, բուլչևիկներն ամեն ջանք էյին թափում պահպանելու համար սրբուխտրական մասսաների առույդ վուգին, վուրպեղի չվհատեցնեն նրանց խուճապային այն լուրումով, թե՛ «փախե՛ք ով կարող ես», և, յեթե արդեն վեճակված և տանուլ տալ սկսած պայքարը, ապա գոնե՛ կարդ ու կանոնով հետ նահանջել (իր Ժամանակին Մարքսն էլ եր տեսւմ, թե լինում են այնպիսի մոմենտներ, յերբ առանց կովի դիրքերը թշնամուն հանձնելը շատ ավելի յե կաղմալուծում մասսաներին, քան թե կովի Ժամանակ պարտություն կրելը): Մենչևիկները, սակայն, կանգնած էյին միանգամայն հակառակ տեսակետի վրա և խուճապորեն դեպի շտապ և անկարդ նահանջն էյին կոչ անում սրբուխտարիատին, արհամարհական կշտամբանք նետելով սարտություն կրած մար-

տիկները հասցեյին, թե՛ «կարիք չկար բնավ դենքի
գլմեղու» :

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏ- Լենինյան կուսակցու-
ԾՈՒԹՅԱՆ ՏՎԵԱԼ ՓՈԻԼԻ Թյունն իր հաջորդական
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒ- պատմական զարգացման
ԹՅՈՒՆԸ . պրոցեսում բարձրացավ

հետևյալ աստիճանի վրա .— ա) հեղափոխական վիթ-
խարազույն պայքարի գործնականի ընթացքում նա
զգաց բանվորների և գյուղացուների դաշինքի պրո-
լետի ամբողջ խորուխյունը, առաջադրեց այդ պրո-
լետն իր ամբողջ մեծությամբ և լուծեց այդպիսին լր-
ջորեն և յերկարատև ժամանակով,*) բ) նա դարձավ
պրոլետարիատի խոշոր մեծամասնության ամենից ճա-
նաչված առաջնորդը և առավել մեծ չափով, քան ան-
ցյալում՝ դարձավ պրոլետարական մասսայական կու-
սակցություն, գ) «պայքարի պարլամենտական և վոչ
պարլամենտական ձևերի, պարլամենտարիզմի բոյկոտի
և պարլամենտարիզմին մասնակցելու գործելակերպե-
րի լեզու ձևերի և անլեզու ձևերի» ծայրաստիճան բո-
վանդակալից փոխաբինության պրոցեսում (տես Լե-
նին—«Ձախության մանկական հիվանդությունը կո-
մունիզմի մեջ»), —նա անցավ քաղաքական գիտության
բարձրագույն դպրոցը, վրի համար հասարակական
անդորրի «խաղաղ» ժամանակաշրջանում հարկավոր
պիտի լինեյին վոչ թե ամիսներ, այլ և շատ տարիներ
և թերևս նաև՝ տասնամյակներ : Լենինի արտահայտու-

*) Այս պրոբլեմը, ահա, անկարող յեղան լուծել
վա՛չ միայն մենչևիկները, այլ և մշտապես նրանց կող-
մը թեքվող «վոչ-Փրակցիոնական» Տրոյկին :

թյամբ («Զախության մանկական հիվանդությունը») — «առանց 1905 թվի դիտավոր փորձի՝ 1917 թ. Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակն անկարելի պիտի լիներ» :

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. «Հեղափոխությունը և Ռկ(բ)Կ-ը նյութերով և վավերագրերով» (քրեատոմատիա), հատ. 3-րդ և 4-րդ :
 2. «1905 թվականը» — հեղափ. շարժման պատմությունն առանձին ակնարկներով՝ Մ. Ն. Պոկրովսկու խմբագրությամբ, հատ. 1, 2 և 3-րդ, 3. Լենին — Յերկերի ժողովածու, հատորներ 6-րդ, 7-րդ (2 մասը) և հատ. 8-րդ, 4. Ո. Վարենցովա — «Կուսակցության չորրորդ համագումարը», հրատ. «Պրոլետարի», 5. Ն. Սեմաչկո — «Կուսակցության հինգերորդ համագումարը», հրատ. «Պրոլետարի», 6. «Վալերյոդ» և «Պրոլետարի», պրակներ 1—6, հրատ. Կուսպատի :
-

V. ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԸ

(1907—1910 թվականները)

1. ԱՅԴ ԾՐՋԱՆԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ. Լենինի մոտ այդ չրջանի բնորոշումը տրված և 1911 թվին գրված և Տրոցկու դեմ ազդված այն հոգւածում, վորի խորագիրն և «Ռուսաստանի ներկուսակցական պայքարի պատմական խմաստը» :

«1905—1907 թվականները հեղափոխությունը սրեց, բացահայտ դարձրեց և սրվա հերթին դրեց դյու-

դպրութեան և լիբերալ (ադամաժխտ) բուրժուազիայի ներհակութիւնը Ռուսաստանում բուրժուական հանրակարգի ձևի խնդրում: Քաղաքականապէս հասունացած պրոլետարիատը չէր կարող ամենայնոցուն մասնակցութիւնը չունենալ այդ պայքարում և նրա՝ դեպի նոր հասարակութեան տարրեր դասակարգերն ունեցած վերաբերմունքի արտացոլումը հանդիսացավ բոլշևիզմի և մենշևիզմի պայքարը:

1908—1910 թվականները յետամյակը բնութագրում և հակահեղափոխութեան հաղթանակով, միահեծանութեան վերականգնումով և պետական լիկլորդ Դումայով, վորը սահարյուրյակայինների և հոկտեմբերյանների դուման հանդիսացավ: Բուրժուական դատակարգերի միջև հանուն նոր հանրակարգի ձևի մղվող պայքարն իսպառ վերացավ ասպարիզից: Պրոլետարիատի համար որովա խնդիր դարձավ ամենատարրական մի խնդիրը—ինչպէս ել վոր լինի պաշտպանել իր, պրոլետարական կուռակցութիւնը, վոր թշնամի յեր և՛ սեակցիային, և հակահեղափոխական լիբերալիզմին: Հեշտ չէ այս խնդիրը, վորովհետեւ հենց պրոլետարիատի վրա յեր, վոր ընկավ տնտեսական և քաղաքական հալածանքների ամբողջ ծանրութիւնը, լիբերալների ամբողջ ատելութիւնը այն բանի համար, վոր սոցիալ-դեմոկրատիան կարողացել եր խել նրա ձեռքից մասսաներին ղեկավարելու դործը հեղափոխութեան ընթացքում:*)

*) «Հակահեղափոխական «սեֆորմի» հաջողութիւնը, —գրում եր 1909 թվին Լ. Բ. Կամենսկը «Սոցիալ-Դեմոկրատում», —արդեն իսկ չափվում և 5·000 կախա-

Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ճշմար-
տամբ չառ ծանր և : Կազմակերպութեանները ջախջախ-
ված են : Հին պեղավարներից շատերը (մանավանդ ին-
տելիգենցիայի շարքերից) ձերբակալված են : Սոցիալ-
դեմոկրատական բանվորների նոր տիպարը, նրանց,
վորոնք կուսակցական գործերն իրանց ձեռքն են առ-
նում, արդեն ստեղծվել և, սակայն նրան աննախընթաց
գծավարութեաններ և վիճակված հաղթահարելու : Այս-
պիսի պայմաններում սոցիալ-դեմոկրատական կու-
սակցութեանը կարգնում և իր «ուղեկիցներից» շատե-
րին : Բնական և, իհարկե, վոր բուրժուական հեղափո-
խութեան բնթացքում սոցիալիստներին միացան նաև
մանր-բուրժուական ուղեկիցները : Նրանք, սակայն,
այժմ կարվում, հեռ են մնում և հեռանում են մարք-
սիզմից և սոցիալ-դեմոկրատիայից : Այդ պրոցեսը յե-
րկան և յեկեկ այժմ յերկու Փրակցիայում ել : Թե՛ բու-
շիկները և Թե՛ մենչեիկները մոտ :

Բուշիկների մոտ այդ բանն արտահայտվեց, վոր-
պես «սոցիալիստական» մի հոսանք, վորպիսին հայտնա-
բերվելով 1908 թվի գարնանը, իսկույն և յեթ պար-
տութեան կրեց Մոսկվայի կոնֆերանսում և յերկարա-
տե պաշարից հետո, մերժված լինելով Փրակցիայի
պաշտոնական կենտրոնի կողմից, արտասահմանում
կազմեց մի հատուկ Փրակցիա—«վալերյոդովյանների» :
Անկման այդ չրջանի ինքնահաստուկ յինեկն արտահայտ-

ղանով և բանտերի շարաթական բնակչութեան թվի ա-
վելացումով՝ 1905 թվի 85·000-ից մինչև 200·000-ը 1909
թվին : Աքսորավայրերի բնակչութեանն աճում և առա-
վել ևս արագ թափով :

վեց նրանով, վսր այդ ֆրակցիայի մեջ ի մի դուժար-
վեցին և՛ այն «մախիստները», վորոնք իրանց պլատ-
ֆորմի մեջ մտցրել էին պայքարն ընդդեմ մարքսիզմի
(«պրոլետարական փրկիսոփայության» պաշտպանու-
թյան ցուցանակի ներքո), և՛ «ուլտիմատիստները», —
այդ ամոթխած ոտզովիստները, և՛ ամեն տեսակ՝ «ա-
ղատության որերի սոցիալ-դեմոկրատները», վորոնք
վողեկորված էին լոզունգների «վառվռունդությամբ»,
բերան էին արել այդ լոզունգները, առանց հասկանա-
լու, սակայն, մարքսիզմի հիմունքները:

Մենչևիկների մոտ մանր-բուրժուական «ուղեկից-
ների» հետ նահանջելու այդ նույն պրոցեսն արտա-
հայտվեց լիկվիդատորական հոսանքով, վարպիսին
լիովին ձևակերպվել և այժմ Պ. Պոտրեսուլի «Նաչո
Զարյա» ժուռնալում, «Վոզրոժդենիյե»-յում և «Փիզն»-
ում, «տասնևվեցի» և «տրոյկայի» (յեռյակի) դիրքում
(Միխաիլի, Ռոմանի և Յուրիի)^{*)}, ընդ սմին՝ արտա-
սահմանյան «Գոլոս սոցիալ-դեմոկրատ» թերթը դրա-
վեց դործնականում ուսական լիկվիդատորների ծա-
ռայի դերը, իսկ կուսակցական մասսայի առջև՝ նրանց
դիվանագիտական քողարկողի դերը:^{**)}

*) «Տասնևվեցի» դիրքն արտահայտված և «Սոցիալ-
դեմոկրատի» 1910 թվի հունվար-փետրվար ամսի
№№ 19—20-ում տպագրված «բաց նամակում» տասնև-
վեց լիկվիդատորների ստորագրությամբ, վորոնք բո-
ղոքում են լիկվիդատորներին, վորպես այդպիսիների
վորակելու դեմ այն պատճառաբանությամբ, թե փա-
տորեն նրանք աշխատում են «պահպանել կուսակցու-
թյունը», բուսցնելով և աճեցնելով նրա մեջ նկատվող

2. ՊԱՌԱՎՏՈՒՄԸ ԼԵՆԻՆ— Կուսակցական «միասնա-
ցԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ կանուխը» վաղուց եր
ճեՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԻ— արդեն, վոր կախված եր
ՁեՎ.

մնացել բարակ թելից :
Ֆրակցիաների միասնականացման ջանքերն ու փորձե-
րը, ինչպես Պարիզի համառուսական կոնֆերանսում
1908 թվի դեկտեմբերին, այնպես ել Կենտկոմի պլենու-
մում 1910 թվի հունվար ամսին (մասնակցությամբ
մենչևիկ-կուսակցականների և «վոչ Ֆրակցիոնական»
Տրոցկու) վորեւեւ ուսլ և իրական արդյունքներ չտվին,
վորովհետեւ բուլչեիկական և մենչևիկական ինքնորոշ-
ման բնությունները քանի դնում, այնքան տվելի և ու-
վելի եյին բացասում և ժխտում իրար :

Բանվորական շարժման նոր վերելքի և ծավալման
սկսված շրջանը յեկավ ե'լ ավելի դրսևորելու այդ յեր-
կու Ֆրակցիաների միջև գոյություն ունեցող հակա-
սությունները : Այն պահին, յերբ բուլչեիկները Լենայի
դնդակահարությունից հետո սկսեցին առավել համա-
ռությամբ, քան անցյալում, ընթացք բռնել դեպի
1905—1906 թվականների եպոպեայի կրկնությունը

և խոչորադույն դժվարություններով տեղի ունեցող
վերակառուցման պրոցեսի մատաղ ծիւերը :

«Յեռյակը» (Միխայիլը, Ռոմանը և Յուրին), այդ
— յերեք մենչևիկներ եյին, վորոնք հրավիրված եյին
1910 թվին Կենտկոմի ուսսական կոլլեգիայի ժողովին՝
կոոպտացիայի հիմունքներով Կենտկոմի կազմի մեջ
աշխատելու համար, տրամադրելով նրանց կուսակցա-
կան փոքրամասնության իրավունքների առավելագույն
յերաչիւրքները (համաձայնության դալով այդ առթիւ)

(կամ՝ ամէլի լավ կլինի ասել՝ դեպի նրա շարունակութիւնը), վորպէս նշանաբան վերցնելով նրա հիմնական լողունքները, մենչեիկներն, ընդհակառակն (ե՛ վոչ միայն բացահայտ լիկվիդատորները, այլև առավել զգուշավոր մարտովականները) — տարտամորեն շարունակում եյին կանգնած մնալ միևնույն տեղում՝ իրանց մասնակի պահանջները — կոալիցիաների, մամուլի ազատութեան և այլ իրավունքների միևնույն ծրագրով, հասնելով արդեն իսկ մինչև այնտեղ, վոր հանրապետութեան փոխարեն՝ պահանջում եյին կատարյալ իշխանութեամբ ոժտված Պետական Դումա:

Այն պահին, յերբ բոլշեիկներն արտահայտում եյին պրոլետարիատի կամքը, վորը պահանջում եր լիկվիդացիայի յենթարկել ինքնակալութիւնը «վոտքերի» քիւարկութեամբ և զործազուլամորների քանակով, կաղմակերպելով հեղափոխական փողոց դուռ դայու յեւույթը և աջակցելով ու ոժանդակելով միլիոնավոր պրոլետարները զործազուլային շարժման, — այդ նույն պահին, ահա, մենչեիկներն ինչ վոր ծիծաղելիորեն քրտինք եյին թափում «սեւիցիոն (խնդրագրային) կամպանիայի» շուրջը, հարձուրամբ ոտորագրու-

մենչեիկական կենտրոնի հետ): Նրանք հեզնական ձեւով հրաժարվեցին ներկայանալ Կենտրոնական Կոմիտեյի նիստին «անձնական մոտիվներով», պայթեցնելով այսպիսով բոլշեիկների բարեխիղճ վործը՝ կուսակցութեան միասնութիւնը պահպանելու ուղղութեամբ:

«Գոյոս սոցիալ-դեմոկրատա» թերթը — մենչեիկների արտասահմանյան որդանն եր՝ մասնակցութեամբ Մարտովի, Դանի, Ակսեյուովի և ուրիշների, վորը դո-

թյուններ համաքելով բանվորների պահանջադրի տակ, վորի մեջ պահանջ էր առաջադրված միությունների, ժողովների, գործադուլների և այլն ազատությունների սահմանափակումները վերացնելու մասին:

Բուլչեիկական «Պրավդան» ուներ 40.000-ի տիրաժ, իսկ մենչեիկական «Լուչը»—15.000-ի: Բուլչեիկական «վեյսակի» միջոցով Լենայի բանվորների սովյալ ընտանիքների ոգտին գանձված էր 13 հազար ուսուրլի 1925 բանվորական խմբերից (վոչ բանվորներից ստացվել էր համաքված ամբողջ գումարի միայն 6 տոկոսը): Մենչեիկական «յությակի» միջոցով համաքվել էր վեյ հադար ուսուրլի—մասնակցությամբ միմիայն 215 բանվորական խմբերի, վորսնք տվել էյին համաքված ամբողջ գումարի միայն 46 տոկոսը: Մի խոսքով, պրոլետարական հեղափոխական մասոաների ավանդարդը—բուլչե-վիզմը—անգուուպ թափով մղվում էր առաջ. իսկ պրոլետարական հետամնաց խմբերի վերջապահը (արրի-յերգարդը) և մանր բուրժուական սագիկալ (արմատակոն) ինտելիգենցիայի առաջնորդ—մենչեիզմը—

յություն ուներ 1908 թ. փետրվարից մինչև Կենտկոմի ոյկենումը—1910 թվի սկզբին:

**) Բուլչեիկների պայքարը լիկվիդատուրության սաղմերի դեմ սկսվել էր արդեն 1907 թվին Լոնդոնի համագումարից, վորտեղ մենչեիկներն աչխատում էյին կուսակցական հերթական խնդիրների թվի մեջ խցկել Ակսելրոդի փայտայած դադափարը՝ «բանվորական համագումար» հրավիրելու մասին տոանց կուսակցականության խարության:

«տեղում կանգնած վազք» եր կատարում և կամ թե պարզապես՝ հետահետ եր քաշվում:

Իրերի այսպիսի դուրսթյան մեջ յերկու այդ Ֆրակցիաների կազմակերպչական պառակտումն անխուսափելի յեր այլ ևս, և այդ պառակտումը (de facto միայն, վորովհետև de jure այդ պառակտումը իրականացավ ավելի ուշ—1917 թվին) կենսագործվեց արդեն 1912 թվի հունվարին, յերբ Պրադայի կոնֆերանսին ներկայացան ավելի, քան 20 կազմակերպութանց ներկայացուցիչները (Լոնդոնի համադումարից հետո այդ—ամենալրիվ ներկայացուցչութունն եր): Այդ կոնֆերանսում գեկուցումներ տրվեցին յերեսուն և յոթ քաղաքների կողմից: Այդտեղ, այդ կոնֆերանսում ել ընտրվեց կուսակցական լիազոր կենտրոնը—Կենտրոնական Կոմիտեն, վորն իր կազմով զրեթե լիովին և ամբողջապես բուլշևիկական եր (Կենտկոմի կազմի մեջ եր մտել միմիայն մեկ մենչևիկ-կուսակցականը)՝ Լենինի գլխավորութամբ: Այսպիսով, կազմակերպչական տեսակետից ևս լենինյան կուսակցութունը գտավ իր իսկական դեմքը:

3. ՏՐՈՑԿՈՒ «ՎՈՉ ՖՐԱԿ- Տրոցկու հեղափոխական ՅԻՈՆԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ» ԴԵՐԸ ամպլուան միշտ բնորոշվում եր յերեք գծով.— Ֆրագլորութամբ, «անձնապատան» միայնութամբ (մասսաները, որինակ, յերբեք չեն դնացել Տրոցկու հետևից, մի բան, վոր յերբեք չի կարելի ասել անգամ իսկ այնպիսի լիկվիդատորների վերաբերմամբ, ինչպիսին եյին, թեկուդ, Պոտրեխովը և Լեվիցկին) և, վերջապես՝ մշտական հակումով դեպի ավելի կամ

սլակաս ձևով քողարկված և դիմակավորված մենչե-
վիզմը և բացորոշ կերպով արտահայտված տենդենցով
դեպի «չեզոքությունը», «վոչ-Ֆրակցիոնականու-
թյունը», այսինքն՝ դեպի միջակային դիրքերը կու-
սակցության առանձին մասերի միջև տեղի ունեցող
Ֆրակցիոնական սլայքարում: Այս վերջին դիժը յեր-
բեմն դարձնում եր նրան հերոս մեկ ժամով և համա-
խմբում եր նրա շուրջը կուսակցական ամենաբազմա-
տարր բեկորները, վորոնց միավորողը սոսկ ընդհա-
նուր թշնամականությունն եր լենինյան կուսակցու-
թյան նկատմամբ: Այսպես յեղավ, որինակի համար,
նաև 1912 թվին, յերբ ի պատասխան Պրազայի կոն-
ֆերանսին և բոլշևիկական կադմակերպության կազ-
մակերպչական ադատադրությանն ամեն տեսակ մեն-
չեիկական և լիկվիդատորական օրոչերից, — լենինյան
խմբին թշնամորեն տրամադրված բոլոր «Ֆրակցիա-
ներն» ու խմբակները պատասխանեցին այսպես կոչ-
ված «ոգոստոսյան բլոկով», վորպիսին կարողացավ՝
հիմք ունենալով նրանց ընդհանուրի ատելությունը
դեպի լենինն ու բոլշևիկական կուսակցությունը՝
միասնականացնել «տրոցկիստներին», «կուսակցու-
կան» — պլեխանովյաններին, «վալերյոզովյաններին»
(Բոգդանովին, Ալեքսինսկուն և ընկ.), բունդիստնե-
րին, «Սոցիալ-Դեմոկրատի» ներկայացուցիչներին
և այլն:

Ոպոդիցիայի «դաշնակցային»՝ այլ կոնֆերանսում
վորոշում կայացվեց չընդունել և չճանաչել Պրազայի
կոնֆերանսի վորոշումները: Վորպես հակակշիռ բոլ-
շևիկական Կենտրոնական Կոմիտեյին, ստեղծվեց ո-
պոդիցիայի կոնֆերանսը հրավիրելու համար հատուկ

մի կազմակերպչական Հանձնաժողով: Սակայն, ինչպես և պետք էր սպասել՝ «ոգոստոսյան» այդ բլոկը չափ չուտով քայքայվեց և կազմալուծվեց դեռ չբաղկած»:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ .

1. «Հեղափոխությունն ու ՀԿ(Բ)Կ-ը՝ նյութերով և վավերագրերով», հրատ. Կուսակառուի, հատոր V।.
2. «Զվեզդայի» և «Պրավդայի» չբջանից», պրակներ I, II, III, հրատ. Կուսակառուի. 3. Լենին—Յերկերի ժողովածու, հատ. XI և XII:

VI. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆԸ

(1914–1917 թվականները)

1. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒՅԹԸ ՅԵՎ ԵՎ ՎԱՐՔԱԽԱՏՈՐԵՆ ՈՒՍՈՒՄ—II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍԸՆՏԱԽԵՐԵԼՈՒ ԽՄԱԿԵՐԽԱՐԿՈՒՄ, ՆԱՆԿԱՑՈՒՄԸ (ԵՐԱՅ). Վորպես կապիտալիզմի հատուկ (և վերջին) մի փուլը, շատ դժվար պիտի լիներ կողմնորոշվել դեպքերի և անցքերի այն փոթորիկներում, վոր տեղի ունեցան համաշխարհային պատերազմի ժամանակ:

Իմպերիալիզմի մասին պրած իր հայտնի աշխատության մեջ Լենինը դիտական այնպիսի բարձրության վրա յեկան դնում համաշխարհային կապիտալիզմի նորադույն եկոնոմիկան բմբունելու խնդրում, վորպիսին հրաշալիորեն կողմնորոշում և մարքսիստներին այս խնդրի ասպարիզում, չթողնելով այլ և ու

վոչ մի կասկած իմպերիալիստական պատերազմի ա-
 վագակային և դիշտախէ բնույթի վերաբերմամբ, ինչ-
 պես նաեւ այն մասին, վոր այդ պատերազմը պայթեց
 մարդկութեան դիւին տարերային աղետի անխափանե-
 լիութեամբ և անխուսափելիութեամբ, աղետի, վոր
 հետեանք եր համաշխարհային կապիտալիստական
 տնտեսութեան տաղանքիդամ գոյութեան ունեցող դիտ-
 յեկախտական հակասութեաններէ դարգացման։ Աշխա-
 տաւոր գոտակարգերը և, մասնաւորապէս, պրոլետա-
 րիատը, հանկարծակիի բերվեցին պետութեաններէ
 յերկու խմբի միջև հայտարարված պատերազմով և,
 դեռ ևս անկարող լինելով պարզորոշ կերպով դիտակ-
 ցելու և բմբռնելու, թե վորպիսի հետեանքներ՝ ե ու-
 նենայու մարդկութեան համար համաշխարհային
 կյանքի այդ նոր փնտր, թողված լինելով պատաս-
 խանատու ալդ պահին իրանց առաջնորդների կող-
 մից, վորոնք բոլորն ել հանկարծ և մեկ անգամից
 «բարի հայրենաստերներ» վերածվեցին, դավաճանե-
 լով աշխատավորների շահերին հողում իմպերիալիզմի
 դիշտախէների, — հնազանդորեն թույլ ավին վերածե-
 լու իրանց «թնդանութային մտի»։ Հեղափոխական
 մարքսիզմի սակավաթիվ ներկայացուցիչներն ելին
 միայն և առաջին հերթին (և դիւրավորապէս)՝ ու-
 սական պրոլետարական կուսակցութեան առաջնորդը,
 վոր հաստատու հալատարիմ մնացին իրանց հին
 դրոշակին։ Ինչ վերաբերում և Յերկրորդ Ինտերնա-
 ցիոնալի բոլոր մյուս ղեկավարներին, նրանք զնացին
 բուրժուազիայի հետեից։

Այսպիսով, այն II Ինտերնացիոնալը, վորի խոր-
 քերում ևս աճում և կուտակվում ելին դիալեքտիկա-

կան հակասությունները ինչ չափով վոր նա պարլամենտական ուղղիցիայի դերը խաղալով, ավելի և ավելի յեր աշխատում «կարմիր թշեր վաստակել», այսինքն՝ ուրիշ խոսքով, ինչ չափով վոր նա հարմարվում եր կապիտալիզմին և «ներածում» եր նրա մեջ, — նա ևս անփառունակ կերպով իջավ պատմական բեմից, վորպես Մարքսի Առաջին Ինտերնացիոնալի ժառանգորդը:

Յերկրորդ Ինտերնացիոնալի գործիչները չըմբռնեցին (և պետք ե տեսել, վոր չաշխատեցին ել ըմբռնել և հասկանալ), վոր իմպերիալիստական պատերազմը չուկաների և գունավոր բանվորների եփանագին դուլութային մասի համար իրար հետ կռվի բռնված համաշխարհային կապիտալիզմի ակուլաների միջև ծագած վեճերը շուծելու վերջին և ամենալճոսական միջոցն ե հանդիսանում: Նրանք չըմբռնեցին (և չուզեցան ել ըմբռնել), վոր այդ պատերազմում իզուր և ապարդյուն պիտի լիներ «կռվապատճառ հանդիսացողներին» վորոնելը, պատերազմի «ազնիվ» և «անազնիվ» մոտիվներ ունեցող իմպերիալիստներին իրարից զատելը. ինչպես նաև ջոկել նրանց մեջ, թե՛ վորոնք են «մարդկային կուլտուրայի պաշտպանները» և վորոնք են այն «բարձարոտները», վորոնք իրանց միլիտարիստական կոչիկով վոտնակոխ են անում այդ կուլտուրան և այլն, և այլն:

Նրանք կանգնեցին «իրանց սեփական» հայրենիքը պաշտպանելու տեսակետի վրա, մոռանալով մարքսիստական այն հին ճշմարտությունը, թե պրոլետարները չունեն և չեն ել կարող իրանց սեփական «հայրենիքն» ունենալ (չակերտներում) և վոր նրանց

խիստական հայրենիքը, մեր շահերի համար նրանք բարձր պիտի դնահատեն իրանց ձեռքն ընկած ամեն մի հրացանը, — իրանց շահագործվող և ճնշված յեղբայրների ամբողջ աշխարհն և հանդիսանում, իսկ թշնամի բանակ կարող և հանդիսանալ սոսկ և միմիայն մեկ բանակը, այն է — բոլոր մակարույծների, արյունարբուների և շահագործողների բանակը և, թերևս, հենց առաջին հերթին՝ մարդկանց այդ տեսակը իրանց սեփական պետութեան մեջ:

Նրանք բանեցրին և գործադրեցին իրանց ամբողջ սովեստութունը, իրանց բովանդակ ճարպկությունը, վորպեսզի այդպիսով կարողանան պղտորել և չբխթեցնել բանվորների միտքը և հետ վրավել նրանց ուշադրությունը իմպերիալիստական պատերազմի սարսափներից ազատվելու պրոբլեմի ամենապարզ լուծումից, այն է — զինվորների համազգեստ հագած բանվորների և գյուղացիների զենքերն իրանց սեփական յերկրների իշխող դասակարգերի դեմ դարձնելուց:

2. ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ (ՅԵՎ ա) Պաշտպանողականնե-
 ՆԱԽԿՆԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵ-
 ՐԻ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՍՈՑԻԱԼ-
 ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ) ԽՄԲԱ-
 ՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՄՊԵ-
 ՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶ-
 ՄԻ ԺԱՄԱՆԱԿ.

ա) Պաշտպանողականնե-
 րը և սոցիալ-չովինիստ-
 ները (Պլեխանովը, Ալեկ-
 սինսկին, Երվեն, Սամ-
 բան, Գեդը, Վանդերվել-
 դեն, Զյուդեկովը և
 մյուսները): Նրանք անվե-
 րապահորեն կանգնած են իրանց սեփական հայրենիքը
 պաշտպանելու, դասակարգային համագործակցութեան
 և քաղաքացիական խաղաղութեան (բուրգֆրիդենի)
 պեսակեռի վրա: Նրանցից յատերը չեն խորշում ան-

դամ իսկ հաշտության ձեռք պարզելուց իրանց նախկին դասակարգային թշնամուն (ինչպես, որինակ, Ալեկսինսկին, վորը հաշտից ցարիզմի հետ) և մինիստրական աթոռի մասին են յերազում իրանց յերկրի բուրժուական կառավարության մեջ: Բ) Հակառակ բեկոյի վրա յեն պտնվում ռուսական պարտվողականները (Լենինը և նրա հետևորդները), վորոնք կանոնաժ են սեփական պետության, այսինքն՝ ցարական Ռուսաստանի պարտության տեսակետի վրա, վորպես «պատերազմական բախտի» հնարավորությունների չարքում նվազագույն մի շարիքի: Լենինիստներն իրանց դրոշակի վրա, բացի Ռուսաստանին պարտություն ցանկանալուց, գրում են նաև մեկ ուրիշ շատ նշանակալից և իր հեռանկներով հզի նոր լոզունդ ևս—իմպերիալիստական սպանդանոցը քաղաքացիական պատերազմի վերածելու մասին՝ չահագործվողների ընդդեմ չահագործողների: Յեվ այս տեսակետից պացիֆիստական (խաղաղասիրական) այն լոզունգին, թե՛ «հաշտություն՝ ինչ դնով ել վոր լինի», պարտվողականները հակադրում են «հաշտություն՝ առանց վորեւ աննեկսիաների և ռազմատուգանքի» լոզունգը, ինչպես նաև—ինքնորոշվելու իրավունք բոլոր ազգությունների համար: Նույն այս տեսակետից ել յելնելով, նրանք առարկում են նաև Յեվրոպայի Միացյալ Նահանգների լոզունգի դեմ, համարելով այդպիսին լմաստազուրկ և կեղծավոր մի ուռույթ, յեթե միայն պատկերացնելու լինենք Յեվրոպայի այդ փոխակերպությունը առանց նրա ամենաեյակտան նախադրյալի—Յեվրոպայի միապետությունների տապալման (ռուսական, ամսորիս-

կան, գերմանական և այլ միապետութիւններ) : «Զինաթափութեան» լողունդը ևս պարավողականները տշխատավորների շահերին հակառոյ մի լողունդ են համարում, վարավհետե զենքը պրոլետարիատի ձեռքին, յերբ այդպիսին ազգայնաւ և բնդգեմ կապիտալիստի, ամենամոտական արգումենտն և հանդիսանում իմպերիալիստական պտտերագմբ շարունակելու և կամ կրկնելու առաջն առնելու համար :

դ) Բեհոսյոսրեն—ներհակ այդ յերկու խմբերի միջև տեղավորվել են ինչպէս այդ միջաւ ել պատահում և, «կենտրոնի» շափախար և ճշտապահ ներկայացուցիչները (Մարտովը, Ակտելրոդը, Կառացկին, Էդգերուրը, Լոնգեն, Մակդոնալդը և ուրիշները) : Սրանք «արդարացի հաշտութեան», ժողովուրդների դինաթափութեան, II Ինտերնացիոնալի առաջնորդների «փոխադարձ ներման» և այլ նման բաների կողմնակիցներն են : Այս խմբավորութեան ալիլի ձախ թեր (Տրոցկին) զբաղված և պարագոքաւ լողունգներ հորինելով, ինչպէս, որինակ, «լու'չ հաղթութեան, վա'չ պարտութեան» ֆորմուլը :

3. ԲՈՒՇԵՎԻԶՄԻ ՆԵՐԿԱՍ. Կարված լինելով Ռուս-ՅԱՅՈՒՅԻԶՆԵՐԻ «ՊԱՏԵ՝ սատտանից և զուրկ լինելու ՊԱՋՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԼՈ՝ լով իր կուսակցութեան ԶՈՒՆԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ հետ անմիջականորեն աշխատելու և նրան զեկափարելու հնարավորութեանից, ՅԻՆ ՍԿԶԲԵԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. Լենինն առավել թափով նվիրեց հեղափոխական իր յեռանդի անսպասելի պա-

չարը արտասահմանում պատերազմի վերաբերյալ իր հայացքների պրոպագանդը մղելու գործին:

Ամենից առաջ, բերնում տեղի ունեցած կոնֆիրանսներում (1915 թվի փետրվար և մարտ ամիսներին) նա, վորպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի լոզունգ, առաջադրում է հետևյալ պահանջները—անվերապահորեն հրաժարվել քվեարկելուց հուլուտ պատերազմական վարկերի և դուրս դալ բուրժուական միլիտարությունների կազմից, կատարելապես խզել կապերը «ազգային խաղաղության» քաղաքականությունից, անլեզալ կազմակերպությունների ստեղծել ամենուրեք այն բոլոր վայրերում, վորտեղ կառավարությունն և բուրժուազիան պատերազմական դրություն են մտցրել, յեղբայրացման պրոպագանդ մղել պատերազմող ազգերի ղինվորների մեջ—խրամատներում և ընդհանրապես ռազմադաշտում, ոժանդակել և աջակցել հեղափոխական ամեն տեսակ մասսոյական յեւույթներին ընդհանրապես: Այս վոգով ել դրված եր նաև մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի մանիֆեստը:

Յերկրորդ, նա յեր, վոր յեւրոպական ինտերնացիոնալիստների հովաքման նախաձեռնողը հանդիսացավ: Առաջին կոնֆերանսը տեղի ունեցավ Յիմմերվալդում (1915 թվի սեպտեմբերի 5-ից մինչև 8-ը) և յերկրորդը՝ Կինտալում (1916 թվի ապրիլի 24-ից մինչև 30-ը): Այդ կոնֆերանսներից առաջինում տեղի ունեցավ բաժանումն յերեք խմբերի, և Յիմմերվալդի «ծայրահեղ ձախ թեւը» Լենինի բերանով պընդում եր, վոր չպիտի սահմանափակվել առաջարկված մանիֆեստի տեկստով (ինտերնացիոնալիստական հո-

վատ հանգանակի շատ չափավոր, վորպեսզի ավելին չասենք, արտահայտութեամբ), այլ և կոչ անել պատերազմող պետութիւնները պրոլետարներին քաղաքացիական պատերազմի դիմելու: Այլի վճռական ընտելութիւն ունեցավ սակայն Կինտալի կոնֆերանսը, վորտեղ ձախակողմյան ոպողիցիան հանձինս Լենինի, Ռուզ Լյուքսեմբուրգի և Կարլ Ռադկի, շատ ավելի սեղմ ու կոմպակտ մի խմբակ ներկայացնելով, առաջարկեց ձեռք առնել ամենածայրահեղ միջոցները՝ պատերազմը լիկվիդացիայի յենթարկելու նպատակով, ինչպես, որինակ, հայտարարել ընդհանուր գործադուլ, սարսուռով դիմել և զինված ապստամբութիւն բարձրացնել: Այս բոլորից հետո առանձնացած «Ցիմմերվալդյան ձախ թևի բլուրոն», վորն սկսեց գործել և աշխատել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լոզունգի նշանաբանի ներքո, կարելի չե դիտել, վորպէս առաջա Յերրորդ Ինտերնացիոնալի սաղմը:

4. ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅ՝ Պատահական չե ընտելութիւնը ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ այն հանգամանքը, վոր ՌՌԻՍՍՍՏԱՆՈՒՄ. գտնվեց մեն մի հատիկ յերկիր միայն—Ռուսաստանը, վորտեղ պրոլետարիատի ներկայացուցիչները իրանց «պարլամենտում» քվեարկեցին ընդդէմ պատերազմական վարկերի: Բավական ե հիշել, վոր պատերազմը վրա հասավ ռուսական պրոլետարիատին 1914 թվականին այն գործի ժամանակ, յերբ այդ պրոլետարիատն զբաղված եր մի նոր 1905 թվական նախապատրաստելու գործով: Գործադուլային ալիքը շարունակում եր հորձանք տալ ամբողջ

յերկրում, անգամ իսկ պատերազմական դուռթկան և և չովինխատական շփանցի (угар) մթնոլորտում, թեպետ և 1915 թվին այդ ալիքը վսրոշ չափով նվազեց և լքւոյ: Այդ թվականին տեղի ունեցաւ 928 գործադուլ, վսրոնց մասնակցեցին մոտավորապես 540.000 հոգի, իսկ հաջորդ 1916 թվին արդեն գործադուլները թիվը հասաւ 1.600-ի, մասնակցողները թիվն էլ՝ 1.300.000-ի, այդ թվում գործադուլների 56%-ը ընկնում և քաղաքական բնավորութեան ունեցող գործադուլների վրա: Պատերազմը հայտարարվելուց հետո Պետական Դումայի բոլշեիկական Ֆրակցիայի ներկայացուցիչները չրջապալեցին բաղձաթիվ քաղաքները, ամեն տեղ պարզաբանելով թալանչիական այդ պատերազմի իսկական բնավորութունը, — պատերազմի, վսրի մեջ առաջին ջութակները մեկն ևր նվազում նաև ուսական իմպերիալիստական բուրժուազիան՝ կոստանդուպոլսի նեղուցները, Գալիցիան և այլն դրափելու իր բուռն տենչանքով հանդերձ: Շատ շուտով մեղադրյալների աթոռին հառած բոլշեիկական Ֆրակցիան (Պետական Դումայի), չնայած իր անսիրճութեան և դատարանում արած մի չարք սխալներին, այնուամենայնիւ կարողացաւ խորունկ մի հետք թողնել բանվոր դատակարգի վիտակցութեան մեջ, և նրա վերաբերմամբ կատարած այդ դատն ու դատաւտանը լավադույն մի առիթ դարձաւ բոլշեիկների դեպի պատերազմ ունեցած վերադարձունքը պարզաբանելու համար:

Վսրքան ևլ վսր դժվար էյին այդ պահին աշխատանքի պայմանները բոլշեիկական կուսակցութեան համար, վսրքան ևլ վսր բարենպաստ էյին նույն այդ պայմանները մենչեիկները և սոցիալիստ-հեղափոխու-

կանները (հսերները) համար՝ նրանց սոցիալ-դավա-
ճանական քաղաքականության և բուրժուազիային ծա-
ռայություններ մատուցանելու գործում («Ջեմգորին»,
«Առետրի և արդյունաբերության համադրամարների
խորհրդին և բուրժուազիայի այլ և նման «պրոդրեսիվ»
մարմիններին»), — աշխուսմենայնիվ բուլժեիկ ընդհա-
տուկյա գործիչների շնչին և աննշան մի խմբակը աշու-
տեղ ևս շատ ավելի ազդեցիկ էր պրոլետարական մաս-
սաների շրջանում, քան թե բուրժուազիայի համ-
բույրներով շոյված և լիզված մենչեիկական «ժամա-
նակի հերոսների» ամբողջ բաղմությունները։ Այս
բանը շատ ցայտուն կերպով դրսևորվեց, ի միջի այ-
լոց, այն արդյունաբերական կոմիտեների եպիգոդի
չուրջը, վորտեղ պրոպակառուրական բուրժուազիան և
մենչեիկական ամեն տեսակ գվոդգյովները կաշվից
դուրս գալով ջանում էին ներգրավելու նաև բանվոր-
ներին, վորպեսզի աշխատող նրանց ևս իրանց պաղո-
վարների հաղորդիչը դարձնեն։ Բուլժեիկների ազդե-
ցությամբ պրոլետարիատն ընդհանուր առմամբ բոյ-
կոտի յեր յենթարկում արդյունաբերական աշխ-
միտները։

5. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱ-
ՆՈՒՄ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿ-
ՅՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՄ ՓՈՒԼԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Համաշխարհային սոա-
տերադմբ և II ինտերնա-
ցիոնալի սնանկացումը
(քրաշ-ը) կարողացան դուրս

քցել ազգային ինքնասահմանափակման սովորական,
սրորված և հին հունից այն բոլոր պրոբլեմները, վո-
րանք կապված էին սոցիալ-դեմոկրատիայի հեղափո-

խական դործունեության հետ։ Այդ պրորլեմներն այժմ ծառացան իրանց ինտերնացիոնալիստական ուրող չհաստիով մեկ, և այդ հանգամանքն, ահա, ամենից առաջ հասկացավ լենինյան կուսակցությունը, վորն իր առաջնորդի հանճարով և Ռուսաստանում կատարվող հեղափոխական տեղաշարժությունների ամբողջ ընթացքով նախապատրաստված եր արդեն յուրացնելու համար համաշխարհային ծավալով կատարված անցքերի հսկայական և կարևորագույն դասերը։ Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու ինտերնացիոնալ (միջազգայնական) լոզունգը դարձավ այլ ևս լենինյան կուսակցության ներգործական և ազդեցիկ լոզունգը։ Այսպիսով, նա մեկ աստիճան ևլ վեր բարձրացավ, իր վրա վերցնելով համաշխարհային հեղափոխության նախապատրաստության ձեռներեցությունը, վորն առաջին ակտր պիտի հանդիսանար կապիտալիստական լծի տապալումը կիսաասիական Ռուսաստանում։

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. «Հեղափոխությունն ու Համկոմկուսը նյութերով և վավերագրերով» (քրեստոմատիա), հրատարակություն Կուսպատի, հատոր VII, 2. Յեմ. Յարոսլավսկի—«Համառոտ ակնարկներ Համկոմկուսի պատմությունից», մաս III-րդ, 3. Լենին—Յերկերի ժողովածու, հատոր XIII։

VII. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԽՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՃԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

(1917 թ. Փետրվար-Հոկտեմբեր)

1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱ- Բուրժուական հեղափո-
փոխութեան ՀԱՂԹԱՆԱԿԸ խությունը կատարվեց՝ հին
ցեղ, նրա ՏԵՍԱԿԱՅԻՆ ալազակային ուժի մի լիա-
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ- կատար կազմալուծման և
ՆԵՐԸ. քայքայման բնական ար-

դյունքն ու հետևանքը հանդիսանալով: Կատարվեց նա
տնտեսական այն քայքայման պարագաներում, վորպի-
սին առաջացել էր ավերիչ պատերազմի «արտադրու-
թյան ծախքերի» և այդ առթիվ ծագող դժգոհության
հետևանքով. մի պատերազմի, վորի նմանն աշխարհն
յերբեք չէր տեսել: Սակայն Փետրվարյան հեղաշրջ-
ման տերն ու տնորենը հանդիսացավ բուրժուազիան,
վորպիսին, սակայն, հեղափոխական մասսաների ճնշ-
մամբ (և հակառակ իր սեփական կամքի) հարկադր-
ված էր լիկվիդացիայի յենթարկել միապետությունը:
Յեւ վայնուհանդերձ, այն իշխանությունը, վոր կարող
էր և ի վիճակի յեր դանդաղեցնել հեղափոխության
ընթացքը, գտնվում էր նրա ձեռքին:

Բուրժուական այդ հեղափոխության անանձնա-
հատկությունը հանդիսացավ յերկիշխանության պատ-
կերը. — մեկ կողմից՝ ժամանակավոր կառավարու-
թյունն էր կանգնած, վորտեղ տեր ու տնորեն էլին
հանդիսանում իմպերիալիստական բուրժուազիայի տ-
մենաթնդազույն ներկայացուցիչները, վորոնք վճռել
էին զոհարել միապետությունը սոսկ պատերազմը
«մինչև հաղթական վախճանը» հասցնելու շահերի

պաշտարանության համար: (Իդուր չեր, վոր Լենինը ժամանակավոր այդ կառավարությունն անվանում էր «ալազադային պատերազմի կառավարություն»): Իսկ մյուս կողմից, կանգնած էին բանվորների, գյուղացիների և ղինվորների պատգամավորների խորհուրդները, վորտեղ տեր և տնօրեն էին հանդիսանում մենչևիկներն ու սոցիալիստ-հեղափոխականները (ես-երները), «դեմոկրատիայի» ներկայացուցիչները:

Իշխանության այդ յերկու կենտրոնների միջև դեռ-ևս ուղղակի պայքար չկար (բուրժուազիան դեռ ևս վախենում էր դեմ դուրս դալու հեղափոխական մասնաշաղկապ հոսանքին, իսկ պաշտպանական դեմոկրատիան չէր եւ յերազում բուրժուազիայի դեմ հեղափոխական վճռողական դրոշմի տակ), սակայն՝ չկար նաև «սրտագին վորեւէ միություն», վորովհետեւ խորհուրդները—ցամալի մի արգելք էին բուրժուական կառավարության համար՝ իր պլաններն իրականացնելու հնարավորությունների տեսակետից:

Դրա հետեանքը յեղավ այն, ինչ վոր նման դեպքերում սովորաբար լինում է. մի փորձ ավելի ուժեղ և իր ուղեցած լավ գիտցող հակառակորդի կողմից (այժալ դեպքում—Գուչկովների, Միլյուկովների, Կոնովալովների և ընկ. կողմից)՝ վորեւէ ձևով ու կերպով խտրելու իր ահամա «զաչնակցին», չչմեցնել, մոլորեցնել և մինիստրական աթոռի գայթակղություններով կաշառել նրան և ի վերջո—դարձնել նրան իր քաղաքականության գնդին ու դործիքը: Չի կարելի ասել, թե բուրժուազիան առանց հաջողությունների վստք դրեց այդ ճանապարհի վրա, ոտեղծեց «կերենչչիւնան» և, հավանորեն, վերջ ի վերջո, սեփական կավենյակների

և Գալլիֆեճերի (Կորնիլովների, Կալեդինների, Դու-
խովների և այլ նրանց նմանների) միջոցով Փետրվար-
յան այդ հեղափոխությունն ել պիտի հասցնէր 1848
թվականի Ֆրանսիական հեղափոխության կամ 1871
թվականի Պարիզյան Կոմունայի վիճակին, յեթե դո-
յությունն չունենային մի շարք այնպիսի Փակտորներ,
վորոնք ընդդիմադիր էյին նրա մասնաբուլթյուններին,
այն ե—ա) պրոլետարիատի զիտակից և հեղափոխական
լինելը, բ) հոգային հեղափոխության այլ ևս բանկիած-
տարերքը, գ) հեղափոխական տրամաբուլթյունների
տճումն ու ծափալումը պատերազմի սարսափներից
հյուծված բանակներում և դ) պրոլետարական հեղա-
փոխության ռադիկալան շտար—լենինյան կուսակցու-
թյան դոյությունը:

Պրոլետարիատի և զորքերի զժգոհ ու անբավական
մասերի հեղափոխական պատրաստությունը պայքար-
մղելու համար հանդես յեկավ արդեն ուրբիլի 20-ի
ցույցի ժամանակ (Միլլուելովի կողմից ապրիլի 18-ին
դաշնակիցներին հայաարարություն տալուց հետո, թե՛
«համաժողովրդական և մեր ձգտումն այս համաշխար-
հային պատերազմը մինչև վճռողական հաղթանակը
հասցնելու համար»), այնուհետե՛ նույն այդ պատ-
րաստությունը հանդես յեկավ հունիսի 18-ին և աղա,
վերջապես, հուլիսի 3-ին, յերբ թվում էր, թե, ահա,
ցույցը ապստամբության և վերածվելու:

Այդ ցույցերն անցնում էյին բուլչեիկական լո-
զունդների նշանի ներքո, — «դեմոկրատական հաշտու-
թյուն», «ամբողջ իշխանությունը խորհուրդներին»,
«կորչե՛ն կապիտալիստ—մինիստրները»: Մասնաների
հեղափոխական տրամադրությունների այսորինակ ա-

րազաթափ հասունացման հետեանքով, մի կողմից, արագանում և ուսաստանյան քաջարի կավենյակ-կոր-նիլովի առպարեղ իջնելը, իսկ մյուս կողմից էլ՝ դե-մոկրատական կուսակցությունների (մենչեիկները և սոցիալիստ-հեղափոխականները) կապիտուլյացիայի պրոցեսի տեմպը՝ հակահեղափոխական բուրժուա-դիայի առջև: Նույն այդ պահին էլ արագորեն և տա-րերային անզսպելիությամբ աճում և ծալալում և ժամանակավոր կառավարությունից հրաժարված դյուզապության հեղափոխական շարժումը (չնայած կերենսկու բերանով կառավարության արած սպառնա-լիքին՝ «արյան և յերկաթի» քաղաքականությամբ գյու-ղացական հեղափոխությունը ճնշելու և խեղդելու մա-սին): Արդեն իսկ ապրիլ ամսին հողային այդ շար-ժումն ընդգրկում և քառասուն և յերկու նահանգը: Աչ-նանը, Հոկտեմբերի նախորդակին շարժումն առավել սպառնալից չափերի յե հասնում՝ կալվածատիրական սեփականության պաշտպանների տեսակետից:

**2. ԲՈՂՇԵՎԻԿԱԿԱՆ ԿՈՒ-
ՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ
ՓԵՏՐՎԱՐԻՑ ՄԻՆՁԵՎ ՀՈԿ-
ՏԵՄԲԵՐԸ.**

Լենինյան կուսակցու-թյունն ստիպված եր չա-րունակ ուղիղ ճանապարհն ընտրել սպասողական քա-ղաքականության, այսինքն՝ դեպի կերենչչինան համ-բերատար վերաբերմունք ունենալու և անհաջողություն խոտոացող բլանկիզմի տակտիկայի միջև: Իր ապրիլ-յան թեզերում Լենինը ճիշտ գնահատություն և տալիս մոմենտին: Փետրվարյան հեղափոխությունը նախա-պատրաստված և հեղափոխական շարժման ամբողջ նա-խընթաց պատմությամբ և առ 1917 թվականն ստեղծ-

ված կացությամբ: Իշխանությունը դեռ ևս չի անցել խորհրդային, —պրոլետարիատի և դյուդաջիության դիկտատուրայի գրգռորման այդ՝ վաղուց ի վեր նշված մարմիններին, և «Իշխանությունը խորհուրդներին» լոգոնդը համառոտն պետք է թելադրել հեղափոխական փողոցին, սակայն բնավ կոչ չանել վաղաժամ կռվի գուրս գալու, մինչև վոր մասսաները փորձով ու գործով չհամոզվեն, վոր մենչեիկները և սոցիալիստ-հեղափոխականների տեր ու անորինություն անելը խորհուրդներում միանգամայն անպետք է:

Դեռ ևս խորհուրդների համառուսական I համագումարում (հունիս ամսին) 700—800 մենչեիկին և եսերին դալիս եր հագիվ մեկ հարյուր բուլչեիկ: Ուժերի այսորինակ փոխաբաբերություն ունենալով խորհուրդներում, ծայրահեղ անմտություն պիտի լիներ դեպքերի ընթացքն արագացնելը և մասսաներին դեպի ադստամբություն մղելը: Ահա թե ինչու հուլիսի 3-իցույցը ևս անցնում է բուլչեիկների խաղաղացնող լոգոնդի նշանաբանի ներքո, վորն ուղղված եր ցուցարարների դինված ամբիոն, այն է—գուրս չգալ խաղաղ ցուցարարության սահմաններից: Յեվ միայն այն ժամանակ, յերբ հորիզոնի վրա յերևացին հակահեղափոխության չարագուշակ ամպերը, յերբ բուրժուական հայրենիքի փրկիչները՝ նստած «սպիտակ նժույգների» վրա՝ վճռական ցանկություն հայտնաբերեցին յուրովի դատաստան անելու հեղափոխության դլիին, պարոնայք կոնովալովների լիտի ցնծության և բուրժուադիայի «սոցիալիստական» ուլիկիցների կատարյալ չրփոթության պայմաններում (այս տեսակետից առանձ-

նապես բնորոշ և շարաքառուիկ «նախապարլամենտի» պատկերը), և, վերջապես, այն ժամանակ միայն, յերր դառն փորձից խրատված քաղաքային դեմոկրատիայի լայնագույն զանգվածները, հիասթափվելով իրանց «սոցիալիստական» առաջնորդներից, բավականաչափ բողոքեցան, — ահա, այս ամենից հետո յե միայն, վոր լենինյան կուսակցությունն իր առաջնորդի թեկադրանքով՝ վորոշեց դեպի կռիվն ու պայքարն առաջնորդել բանվորների և զինվորների փողոցը շտապող հեղափոխական մաստան՝ ընդդէմ կերեհչինայով համեմված պարոնայք Միլյուկովների ուժիմի:

Յեվ ահա, կալվածաիրական ագարակներն ընդդրկած հրդեհների շողադուռության ֆոնի վրա, լենինգրադում վորոտացին «Ալքորայի» թնդանոթները: Հոկտեմբերը դրեց պրոլետարիատի առջև պատմական մի նոր խնդիր—սոցիալիստական շինարարության խընդիրը, իրանց ուժի մեջ պահելով նաև մի շարք զուգընթաց խնդիրները, յեղնելով այն պահանջից, վոր անհրաժեշտ և լրացնել այն ամենը, ինչ վոր թերի և անկառնար եր թողել բուրժուական հեղափոխությունը:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Ի. Ստալին.—«Հոկտեմբերի ուղիների վրա»,
2. Յեմ. Յարոսլավսկի.—«Համկոմկուսի պատմության համառոտ աղնարկներ, մաս. II, 3. Լենին.—Յերկերի ժողովածու, հատոր XV.

ՄԱՍԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԶԵՌՔՈՒՍ ՊԱՇԵՆՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԸ

(1917 թվի հոկտեմբերից մինչև 1920 թվին «Նեֆ»-ի
հայտարարումը)

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅՔՈՒՆԸ
ԼԵՐԸ.

Խորհրդային իշխանու-
թյան առաջին քայլերը նը-
շանակվեցին նախ և առաջ
հաշտության և հաղի վե-
րաբերյալ հրապարակված դեկրետներով: Աշխատավոր
դանդվածները ստանում եյին այն, ինչ վոր առաջին հեր-
թին ակնկալում եյին խորհրդային իշխանությունից:
Իսկ ինչ վերաբերում և դործարանների աղգայնաց-
մանը, ապա կուսակցությունն այստեղ, Լենինի առա-
ջարկությամբ, վորոշեց շատ զգուշ կերպով մո-
տենալ այս խնդրին, վորպեսզի աղգախոսվ չը-
ղադարեցվի արտադրական մեքենայի դործու-
նեցությունը և այս իսկ պատճառով սկզբնական
չրջանում սահմանափակվեց արտադրության վերաբեր-
մամբ բանվորական վերահսկողության լողունդի կիրա-
ռությամբ: Սոսկ հետագայում, մասամբ այն ամբողջ
ողսյմանների ճնշմամբ, վորպիսին պահանջ եր առա-
ջացնում կիրառելու այն սխառեմբ, վոր հայտնի յե
ոաղմական կոմունիզմ անունով, և մասամբ ևլ դործա-
րանատերերի կողմից դործադրված չարամիտ սարո-
տաժի հետեանքով, — կատարվեց, վսչ միայն խոշոր
դործարանների, այլ և մանր ձեռնարկությունների
աղգայնացումը:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ- ՆԻՄՆԱԴԻՐ Ժողովի ընա-
ժԵՐԻ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒ- րությունների արդյունք-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵ- ների տվյալները պարու-
ՐԻՑ ՀԵՏՈ. նակող մեկ հողվածի հի-
ման վրա Լենինը շատ հետաքրքրական վերլուծումն և

տալիս Հոկտեմբերյան հեղափոխության պահին գործող ուժերի փոխհարաբերություններին: Ընդհանուր պատկերը հետևյալն է.—բոլշևիկների կուսակցությանը տրված է 9 միլիոն ձայն (25%-ը), մանր բուրժուական դեմոկրատիաների կուսակցություններին (գլխավորապես սոցիալիստ-հեղափոխականներին)—22,6 միլիոն ձայն (62%-ը) և կալվածատերերի և բուրժուազիայի կուսակցություններին—4,6 միլիոն ձայն (13%): Այստեղից պարզ յերևում է, վոր սոցիալիստ-հեղափոխականները և մենշևիկները գերակշռում են բոլշևիկներին և այնուամենայնիվ բոլշևիկները հաղթեցին, վորովհետև արդյունաբերական պրոլետարիատի կենտրոններում, այսինքն՝ այն վայրերում, վորտեղ իշխող եր Հոկտեմբերյան հեղաշրջման գլխավոր սուբյեկտն ուսանորենը, դրությունն այսպես եր. Լենինգրադում բոլշևիկներին հետևում է 45%-ը, սոց. հեղափոխականներին—16%-ը, Լենինգրադի նահանգում բոլշևիկներին հետևում է 50%-ը, սոցիալիստ-հեղափոխականներին—26%-ը: Լիթվանդիայի նահանգում—72%-ը բոլշևիկներին և 0%-ը սոցիալիստ-հեղափոխականներին: Մոսկվայի նահանգում համապատասխան թվերը դասավորվում են այսպես—56% և 8%, Տվերի նահանգում—54% և 39%, Վլադիմիրի նահանգում—56% և 32%: Բայց դրա փոխարեն մերձվոլգյան սևահող շրջանում սոցիալիստ-հեղափոխականներին ձայն է տալիս 70%-ը, իսկ բոլշևիկներին—16%-ը, Ուկրաինայում—առաջիններին՝ 77%-ը, յերկրորդներին—10%-ը և վերջապես Սիբիրում—75%-ը սոցիալիստ-հեղափոխականներին և միայն 10%-ը բոլշևիկներին:

Միանգամայն պարզ և, վոր պրոլետարիատն իր հեղափոխութեան մեջ հաղթեց հետամնաց և անշարժ դյուդին: Սակայն հաղթված դյուդը և մանավանդ՝ մերձ-վոյգյան շրջանը, Սիբիրը և Ուկրաինան իսկույն և յեթ հանձնեցին իրանց դիրքերը: Բուլշեիկներին հետևում եր դյուդական չքավորությունը: Կուլակները պատ-րաստ եյին սթանդակելու հակահեղափոխութեան, իսկ միջակը տատանվում եր սրանց և նրանց միջև, ավելաց-նելով իր այդ տատանումներով աջ կողմում՝ հակա-հեղափոխութեան հաղթանակի տվյալները և կամ թե՛ ուղղելով բուլշեիկների պայքարի դիժը, յերբ վոր նը-կատում եր, վոր սպիտակգլարդիականությունը «ուե-տավրացիոն» (գլխաւորութեան) ինչ վոր առարկա-յական փորձեր և անում: Ահա, այս ընդհանուր նախա-դրյալներով և, վոր պետք և բացատրել քաղաքացիական պատերազմի այդքան յերկարատևությունը՝ Հոկտեմ-բերից հետե յերեք տարվա ընթացքում:

3. ԱՐՏԱՔԻՆ ՅԵՎ ՆԵՐ- Հարկավ, ծիծաղելի կը
ՔԻՆ ՃԱԿԱՏՆԵՐԸ ՀՈԿ- լիներ մտածելն անգամ,
ՏԵՄԲԵՐՅԱՆ ՌՈՒՍԱՍ- թե դիշատիչ իմպերիալիզ-
ՏԱՆՈՒՄ. մը կարող և հանդիստ թող-
նել պրոլետարական պետութեանը: Քանի դեռ նա ինքն
եւ դուրս չեր յեկել պատերազմական և հետպատերազ-
մական դժվարությունների ճիրաններից, քանի դեռ
նրա մոտ եւ ամեն ինչ կարգին չեր քաղաքա-
ցիական անպարբի և խաղաղութեան տեսակե-
տից, այդ չափով եւ նա չեր կարող իր
բովանդակ ծանրութեամբ անմիջականորեն ընկ-
նել սոցիալիստական յերիտասարդ հանրապետութեան

վրա, ստեղան, դրա փոխարեն՝ նա շտապեց վռեկու
և դիվանագիտության միջոցով ոգտապործել խորհրդա-
դային իշխանությանը թշնամի հակահեղափոխության
բոլոր ներքին ուժերը, վերոնց թվին տեղե և վերադրել
նաև—և նույնիսկ վոչ ամենավերջին հերթին—կուսակ-
ցականորեն կազմակերպված մանրբուրժուական խում-
բակցությունները:

Յե՛վ մենչեիկները, և՛ սոցիալիստ-հեղափոխական-
ները հեղափոխության հենց բուն սկզբից կանգնեցին
բարրիկադների այն կողմում, իսկ սոցիալիստ-հեղափո-
խականները, վոր հակահեղափոխական կուլակության
և մառնավորապես՝ կադակության կազմակերպիչներն
ու առաջնորդները դարձան, —նրանք նույնիսկ առա-
ջին ջութակի դերը կատարեցին ինտերվենցիոնիստնե-
րի այն դավադրության մեջ, վոր նյութվում էր ընդ-
դեմ խորհրդային յերկրի: Դեռ ևս 1918 թվին գերմա-
նացիները գրավում են Ուկրաինան և այդ շրջանի քա-
ղաքական կյանքը ամբողջապես դնում են սկսորտադ-
չինայի նշանի ներքո: Մերձվողյան շրջանի և Սիբիրի
սոցիալիստ-հեղափոխականներն ամենաուերտ և ամուր
կապն են հաստատում իմպերիալիստների արբանյակ և
նրանց կողմից նշանակված Կոլչակի՝ հետ: Չեխո-Սլո-
վակյան «դեմոկրատները» անգլա-Ֆրանսական կապի-
տալի դործիքն են դառնում:

Յեվ այն հանգամանքը, ահա, վոր յերիառաարդ,
աղքատացած, միանգամայն ավերված և սոված «սու-
յոկով» ապրող պրոլետարական յերկիրը ի վիճակի յե-
ղով պաշտպանվել թե՛ Արևմտյան Յեվրոպայի ինտեր-
վենցիոնիստներից, թե՛ ազնվականների Լեհաստանից,
թե՛ Կոլչակից, Կրասնովից, Դենիկինից, Յուգենիչից,

Պուտովից, Սեմյոնովից, Վրանգելից և թե՛ հակահեղափոխութեան այլ մեծ ու փոքր հրեշներն ամբողջ մի յերամակից, — այս, ահա, սպառնացանում և, թե հեղափոխական յետանդի և թափի ինչպիսի արտահոսվոր դորութիւնն կարող և դրսեմբրվել այն մասսաներից, վորոնք արթնացել և վտաքի յեն կանգնել այլ ևս դիտակից կյանքի և իրենց սպազան սեփական ձեռքերով կառուցանելու և կերտելու համար և վորոնք միևնույն ժամանակ ինչ գնով ևլ վոր լինի, ուղում են պաշտպանել հեղափոխութեան նվաճումները բոլոր հարձակմաներից :

4. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒ- Վորպեսդի կարողանա
ՆԻԶՄԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒ- հաղթանակ տանել արտա-
ԹՅՈՒՆԸ . սովոր քայքայման պայ-

մաններում, պրոլետարիատը հարկադրված տխրի լինելը գիմելու բացառիկ միջոցների : Նա հարկադրված էր դարձադրել վոչ միայն հացի մենաշնորհը՝ բանակն ու քաղաքների պրոլետարական բնակչութեան պարենաւ-վորման խնդիրը լուծելու նպատակով (թեկուզ և հիմք ընդունելով հենց կեսֆունտանոց պայտիը), ալ և դուլքի և հումանյութի ռեկվիզիցիա կատարել, սահմանել պարեն-ուսովյորտական (այսինքն՝ պարենաւորման միջերգների ավելցուկները հավաքել այդպիսիներն արտադրողներից), կադմակերպել հտտուկ չքավորական կոմիտեներ (комбеды)՝ համառող կուլակային տարրերի դեմ կռվելու համար, սահմանել աշխատանքային կարգապահութիւն, պարտաւորեցնել և ստիպել բուրժուազիային (վորն իր անբարեհուսութեան պատճառով աղատված էր բանակի զինվորական ծառայու-

թյունից) կատարել աշխատանքային պարհակը և այլն : Այս ամենը, իհարկե, անբարյացակամ վերաբերմունք միայն կարող էր առաջացնել ընդհեռության ունեւոր խա-
վերի (գլխավորապես, կուլակներին) կողմից դեպի բոլ-
շևիզմը և տրամադրել նրանց դեպի բանդի-
տիզմը : Յեւ վստահեցնանք իմ բոլշևիզմը հաղ-
թեց, վերսկսեալ վողջ յերկիրն և վերսկսե-
մի ամբողջություն զխտակցում կամ ներքին
ընդհանրական զգուշացում էր, վոր բոլոր այդ միջոցներն
ևլ անհրաժեշտ են նրա համար, վոր կարելի լինի պաշտ-
պանել հեղափոխության նվաճումները «ոսակցիւն» կա-
պիտալիստներից և կալվածատերերից :

Պրոլետարիատի վոչ նվազանչանակ (և նույնպես
հրաշքանման) նվաճումների թվին պիտի վերագրել՝
նրա այլ նվաճումների հետ միասին՝ նաև յերեք միլիո-
նանոց Կարմիր Բանակի ստեղծելը՝ իր դեմոկրատական
հրամանատարական կազմով և «քաղզկեկներով», վորոնք
կարողացան պատվով ի կտուար յածել իրանց վրա դրամա-
տիկական դերն ու առաքելությունը :

Յ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿՅԱՆՔԻ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ
ՑԱՅՏՈՒՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ
ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ
ՇՐՋԱՆՈՒՄ .

Դժվար պիտի լինե-
ր սպասել, թե այն վիթխա-
րագույն դժվարություն-
ների պայմաններում, վոր
ծառայան կուտակցության

առջև Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, վոչ մի
առիթ չէր լինելու վորևէ տարածայնությունների,
տարաշեղումների և անհամաձայնությունների համար
հենց իր իսկ կուտակցության շարքերում : Կարելի չէր
միայն մի բանից զարմանալ, վոր այդ տարածայնու-

թյուններն ամէլի սուր չեյին լինում և հաղթահարվում էյին համեմատաբար արագ: Բայց այս յերջանիկ հանդամանքով կուսակցությունը պարտական և Վլադիմիր Իլյիչի խելքին և հեղինակութեանը:

Մեծ վիճարանություններ էյին տեղի ունենում րանկերի ազդայնացման խնդրի շուրջը: Տարածաշու-թյունների գաղաթնակեր հանդիսացաւ Բրեստի «խայտառակ» (ПОХАБНЫЙ) հաշտությունը, վորպիսին ձախ սպորդիցիան («ձախակողմյան կոմունիստները») համարում էյին անթույլատրելի, վորովհետեւ այդ, նրանց կարծիքով, դավաճանություն պիտի լինէր համաշխարհային հեղափոխութեան, վորին նրանք, «ձախ կոմունիստները» համոզված սպասում էյին ժամ առ ժամ:

Պակաս չափով սուր, սակայն՝ ամէլի խոր էյին այն վիճարանությունները, վոր առաջացան կուսակցութեան անդամների միջեւ Կուսակցութեան VІІІ-րդ համագումարում՝ ծրագրի քննութեան կապակցութեամբ: Առանձնապէս սրվեց համագումարին մասնակցողների ուշադրութեանը ազդությունների ինքնորոշման իրավունքի խնդրի շուրջը: Բարեբախտաբար, հաղթող հանդիսացաւ Լենինի ձայնը, վորը պնդում եր հենց հատկապէս այդ սկզբունքը, վորպիսին, ինչպէս հայտնի յե, հետագայում շատ բարենպաստ հետեանքներ ունեցաւ այն յերկրի սոցիալիստական շինարարութեան գործում, վորտեղ խոշոր աւելոս են կաղմում բնակչութեան այսպէս կոչված ազդային փոքրամասնությունները, վորոնք ցարական ժամանակներում աննախընթաց ճնշման և շահագործման որչեկտ են յեղել «իշխող բնակչութեան» ձեռքին:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Ն. Կարպով և Մ. Ֆլիդներ. — «Լենինիզմի քրեա-
տոմատիա», մասն IV, 2. Յեմ. Յարոսլավսկի. —
«Համկոմկուսի պատմության համառոտ ակնարկներ» —
մասն II, 3. Լենին. — Յերկերի ժողովածու, հատոր
XVI և XVII:

IX. ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՇԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՆեՊ-ի հռչակումից հետո)

1. Ի՞նչ ԲԱՆՆ Ե ՆԵՊ-Ը.

Ռազմական կոմունիզմը, վոր հակադասական գոհարն-
բություններ պահանջեց դյուղացությունից, վորպես
«ապստիկ» խորհրդային իշխանության, քաղաքացիա-
կան պատերազմի վերջանալու պահերին (1920 թվի վեր-
ջին) կորցրեց արդեն իր դոյության իրավունքը: Այդ
մասին կուսակցությունն ազդեցիկ հիշեցում և նախա-
դրուչացում ստացավ Կրոնշտադտի խոտովության ձե-
լով: Ժամանակ եր հասել արդեն ավելի ազատություն
տալու դյուղացության տնտեսական ինքնորոշմանը՝
նրան ազատ առևտրի և պարեն-ուսղվյալստեան պարեն-
տուրքով վախարինելու ձևով, վորպիսին և բավակա-
նաչափ վճողականությամբ կիրարկվեց Վլադիմիր
Իլյչի կողմից, վորը կուսակցության X-րդ համագու-
մարում արմատապես դարձրեց պետական նալի դեկը:
Բոլորն եր, սակայն, իսկույն և յեթ չըմբռնեցին այդ
մանյովը և անմիջապես չե, վոր ընդունեցին ՆեՊ-ը
(նոր տնտեսական քաղաքականությունը), սակայն կու-

սակցութիւնը, վերապես մի ամբողջութիւն, հոգարութ-
յամբ առաջ ընթանալով իր առաջնորդի կողմից մաս-
նանշված ճանապարհով, շատ շուտով կուհնէլով, վոր
դյուրացութիւնը կարելի չէ հաղթահարել վոչ թե
բռնությամբ և կամ՝ ռազմական կոմունիզմի մեթոդնե-
րով, այլ—դյուրացական արտադրութիւնը՝ տնտե-
սության համայնականացված տեսակի դանդաղորեն
վերափոխելու միջոցով. վլադիմեր Իլյիչը հայտարա-
րեց, վոր ՆեՊ—ը հսկակովւմ և Քրջորեն և յերկարատե-
ժամանակով: Տնտեսական այս նոր քաղաքականու-
թյունը պահանջեց մեզնից արմատական կերպով վերա-
նայելու մեր Ֆինանսական ամբողջ քաղաքականությու-
նը և ստեղծելու կայուն վալյուտա: Կոմունիստները
ստիպված չեղան, Լենինի խորհրդով, «առեւտուր անի-
լը սովորելու»:

2. ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ Լենինիզմի դարպասման
ԶՈՂՄԱՆ ՊՐՈՐԼԵՄԸ. ամբողջ նախընթաց պատ-
մությամբ արդեն այս
պրորկմը նախապատրաստված էր, վոր կուսակցու-
թյունն ի վիճակի լինի ուղիղ կերպով լուծելու այդպի-
սին սոցիալիստական շինարարության դարաշրջանում:
Կոնկրետորեն ասած, նոր տնտեսական քաղաքականու-
թյան տարիններին այդ պրորկմը հանդէլ էր հետեյալ
մոմենտներին.—ա) կոոպերացման միջոցով չքավոր
դյուրացության ոժանդակումը և դաշինքը միջակի
հետ, բ) «մկրատի» լիզվակները իրարից հեռացած լի-
նելու վերացումը՝ դործարանային արդյունաբերության
արտադրանքի գները անընդհատ և անչեղում իջեցման
միջոցով՝ յերկրի ինդուստրացման տմամն հարաբերա-

կանությամբ, դ) գյուղի կոոպերատիվ ցանցով ծածկելը և, այսպիսով, մասնավորին գյուղատնտեսական եկոնոմիկայից դուրս քցելը, զ) գյուղացության կյանքի կուլտուրական պայմանների բարելավումը (լուսավորություն, խրճիթ-ընթերցարաններ, գյուղի երեւոյրավորում, սաղէիս և այլն), յե) գյուղի ներգրավումը յերկրի քաղաքական կյանքի մեջ (գյուղի ներկայացուցիչների մասնակցութիւնը խորհուրդների ընտրութիւնների և խորհուրդների մեջ), զ) հասարակայնության զարգացումը գյուղում (ՄՈՊՐ-ը, և այլն), և) քաղաքի շէնքութիւնը գյուղի վերաբերմամբ, ը) միանշանակ գյուղատնտեսական հարկ սահմանելը, հողաչինարարության շուտափուլի իրացումը և այլն:

3. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻՆ ՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Տնտեսության մինչպատերազմյան մակարդակի վերականգնողական ջր-

ջանը վերջացավ: Դրան հաջորդում և, սակայն, վերականգնողական ջրջանի համեմատությամբ իր տեմպով ավելի դանդաղ (հին հիմնական կապիտալի սպառված լինելու հետեանքով) մի շրջան, վորը, սակայն, ավելի արագաթափ և, քան կապիտալիստական յերկրները: Այդ—մեր արդյունաբերության աճումն և՛ պլանավոր տնտեսության հիման վրա (այդ մասին են վկայում նաեւ պետպլանային հանկարային հնգամյա ծրագրերը):

Մեր պլանային տնտեսության առավելութիւնը կապիտալիստական տնտեսության համեմատությամբ նախ և առաջ նրանումն և, վոր մեր պլանային տնտեսութիւնը՝ վոչ որինակ, կապիտալիստական տարերքի՝

տնտեսական ներդաշնակությունն և սահմանում արտա-
դրութեան միջոցներ արտադրելու և սպառողութեան
միջոցներ արտադրելու միջև, — մի նախապայման, վո-
րպիսին բացակայում և կապիտալիստական արտադրու-
թեան մեջ և վորպիսին նրա ամենահիմնական դիպելի-
տիրական հակասությունն և հանդիսանում, արտա-
հայտվելով մերթ ինդուստրիալ (արդյունաբերական)
ծաղում ունեցող ապրանքների վաճառահանթույսն
(ՅՈՒՏԱ) ճշնաթափի և մերթ հողային (ագրարային)
ճշնաթափի մեջ: Մի շարք տարիների համար նախապես
ուրվագծված տնտեսութեան պլանը պետք և նախատե-
սի ազդային յեկտմտի նպատակահարմար բաժանումը
վերարտադրութեան և ընդլայնված արտադրութեան
համար դործադրվող միջոցների (տեխնիկայի վերջին
խոռքի համաձայն, հիմք առնելով ելեքտրավորումը,
վորի վերաբերմամբ Վլադիմեր Իլյիչն ասում էր, թե
կոմունիզմը, այդ—խորհրդային իշխանությունն և պը-
լյուս ելեքտրավորումը) և—«չըջանառու կապիտալի»,
վորպիսին սակայն, չի կարող ավելի պակաս լինել, քան
թե այն վորոչ մինիմումը (նվազագույնը), վոր ան-
հրաժեշտ և բանվորների առողջությունն ապահովելու
և կուլտուրական պահանջներին դոհացում տալու հա-
մար:

Այս վերջին խնդիրը սերտորեն կապված և աշխա-
տանքի պաշտպանությունը կազմակերպելու դործին
(ԽՍՀ Միութեան մեջ այդ դործն անհամեմատ ավելի
յով հիմքերի վրա յե դրված, քան թե կապիտալիստա-
կան յերկրներում): Պետք և նշել, սակայն, վոր աշխա-
տավարձի բարձրացումը կախված և վորչ միայն բանվո-
րի պահանջների և կարիքների մակարդակի բարձրացու-

մից, այլ և նրա աշխատանքն ավելի խելացի կերպով ոգտադործելուց՝ տեխնիկայի վերջին խոսքի համաձայն (արտադրութեան մեքենայացման կապակցութեամբ) — այդ աշխատանքի բարձրագույն արդյունավետութեան շահերի տեսակետից: Վորքան ավելի բարձր լինի այդ արդյունավետութեանը, այնքան ավելի բարձր և նրա ստատավոր կլինին նաև բանվորների աշխատանքի պայմանները: Յեւ նույն այդ սկզբունքի վրա ել պետք և կառուցված լինի «խնայողութեան սեփիմը» վոչ միայն ֆարքիկաներում և գործարաններում, այլ և տմբողջ պետական ապարատում:

4. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐՈՒՆԴՅԱԼ ԽՆՂԻՐՆԵՐԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՆՈՂԻՂ և անսխալական լու-
ՐԱՎՈՐՈՒԹԵՈՒՆԸ ՄԵԿ ծումը շատ պարզ լուծում
ՅԵՐԿՐՈՒՄ. և տալիս նաև այն պրո-
բլեմին, թե՛ հնարավոր և արդյոք սոցիալիստական
շինարարութեանը մեկ յերկրի սահմաններում: ԽՍՀ
Միութեան սահմաններում այդորինակ շինարարութեա-
նը (չնայած կապիտալիստական շրջապատման) կատար-
վում և արդեն մեծագույն թափով: Յեւ յուրաքանչյուր
այն հաջողութեանից հետո, վոր տարեց-տարի և որա-
վուր մենք ձեռք ենք բերում յերկրի ինդուստրացման
գործի և գյուղատնտեսութեան կոլլեկտիվացման աշխա-
տանքի ասպարիդում՝ կոոպերացիայի անչեզոքն գոր-
ծող ապարատի միջոցով, ինչպես նաև կոլլեկտիվ տն-
տեսութեանների կազմակերպմամբ, — յուրաքանչյուր
այդ նվաճումից հետո, ահա, իր տեսական սրութեանն
և կորցնելու անգամ իսկ հենց նույն այդ սոցիալիստա-
կան շինարարութեան պրոբլեմը, վորովհետև այդ հար-

ցին պատասխան ե տալու ե արդեն իսկ տալիս ե հենց ինքը կյանքը :

Այս բնով չի նշանակում , իհարկե , թե ԽՍՀ Միությունն անտարրեր պիտի մնա այն ամենի հանդեպ , ինչ վոր կատարվում ե այնտեղ՝ նրա քաղաքական սահմաններից դուրս : Դիտելկոտիքական հակասությունները դարգացման պրոցեսը , հակասությունները , վորոնք ղեկի անխուսափելի կրախն ու անանկացումն են առաջնորդում կապիտալիստական բովանդակ աշխարհը (ղեկի համաշխարհային հեղափոխությունը) , — այդ պրոցեսը , ահա , կատարվում ե արագացված թափով : Լենինի առերով՝ « պայքարի (համաշխարհային) յեկը վերջին հաշվով կախված ե այն փաստից , վոր Ռուսաստանը , Հնդկաստանը , Չինաստանը ե այլն բնակչության վիթխարադույն մեծամասնությունն են կազմում : Յեւ հենց բնակչության այդ մեծամասնությունն ե , ահա , վոր վերջին տարիներս արտասովոր արագությամբ ներդրավում ե իր ազատագրության պայքարի բովերը , այնպես վոր այս տեսակետից կասկածի մի նշանախեց անգամ չի կարող լինել այն մասին , թե՛ ինչ վախճան ե ունենալու այդ պայքարը : Այս տեսակետից սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիովին ե անվերապահորեն ապահովված ե » : (Լենին . — Յերկերի Ժողովածու , հատոր XVІІІ) :

Անհրաժեշտ ե միայն լավագույն կերպով ոգտագործել այն դարաշրջանը , վոր շնորհել ե մեզ պատմությունը ե մտածել այդ շրջանը վորքան հնարավոր ե տեսական դարձնելու մասին , յեթե արդեն պարզ ե , վոր մենք վաղ մի դեպքում չենք կարող խուսափել իմպերիալիստական բլոկի հետ գինված կոնֆլիկտ ունենալուց : Այս իսկ

պատճառով կուսակցությունը կանգնած է ըստ ամենայնի և միանգամայն ուղիղ ճանապարհի վրա, յերրեւա, ոգտագործելով հեղափոխության ծավալմանն ու ժանդակելու ամեն մի հնարավորությունը այն բոլոր յերկրներում, վորտեղ այդպիսին արդեն հասունացել է և կամ հասունանում է, — միաժամանակ խուսափում է զինված կոնֆլիկտների վորեւէ առիթներ տալուց կապիտալիստական յերկրներին, — այլ խոսքով ասած՝ յերրեւա չի ուղղում դիմել ամանտյուրային մեթոդներին: Կուսակցության և Կոմիւնտերնի այս առողջ և սեւալիստական ընթացքի շրմբունելը, ընթացքի, վոր լայնագույն կերպով համապատասխանում է համաշխարհային հեղափոխության շահերին, — այս է, ահա, վոր կազմում է տրոցկիստական ոգոյիցիայի նախնական մեղքերից մեկը: Ծիծաղելի կլինեւ ընդ սմին խոսել լենինյան կուսակցության «ազգային սահմանափակության» մասին (ոգոյիցիայից սերված խոսքերից մեկն է այս), — այն կուսակցության, վորը կարողացել է կապիտալիստական յերկրների պրոլետարիատի վրա ներգործելու և նրան հեղափոխականացնելու այնպիսի յերեւելի մի գործիք ստեղծել, ինչպիսին է III Ինտերնացիոնալը:

Կոմիւնտերնը, վոր Լենինի հեղափոխական հանճարի ծնունդն է հանդիսանում, վոչ այլ ինչ է, ըայց յեթե կենսագործված է մարմնացված լենինիզմի ճյուղերից մեկը: Յերրորդ Ինտերնացիոնալի կազմակերպման յուղունդը տրված եր Լենինի կողմից դեռ ևս Յիմմերվալդի ժամանակ և դեռ ևս ավելի վաղ (1914 թվին): Յիմմերվալդի ձախ թեւն այն պահին վորոչ չափով ապաղա III Ինտերնացիոնալի սաղմն եր հանդիսանում արդեն:

Կոմունիստական Ինտերնացիոնալի առաջին կոն-

դրեալ կայացալ մասկվայում 1919 թվի մարտի 4-ին՝ մասնակցութեամբ քսան և չորս կոմունիստական կուսակցութեանների և խմբավորութեանների ներկայացուցիչների։ Այն պահից սկսած Կոմունիստական ինտերնացիոնալի բնօր կոնգրեսներն եւ յուրաքանչյուր տարում հրավիրուած են նույն Մոսկվայում։ Կոմինտերնի առաջադրած նպատակներից մեկն եւ ուղղակի և անմիջական կերպով վերաբերում և խորհրդային յերկրին, վերոմհետե կապիտալիստական պետութեանների պրոլետարիատի շարքերում սոցիալիստական շինարարութեան այն ուղիղ ճանապարհի պրոպագանդ մղելը, վորի վրա վտաք և դրել ԽՍՀ Միութեան բանվոր դասակարգը, յեղբայրական կոմկուսակցութեանների կողմից բանվորա-գյուղացիական կառավարութեան քաղաքականութեան պաշտպանութեանը կապիտալիստական մամուլի, բուրժուական կառավարութեանների և բուրժուական հասարակական կարծիքի զրպարտողական շարամիտ հարձակումներից ԽՍՀ Միութեան դեմ, Կոմինտերնի կողմից բացատրութեան տալը համաշխարհային պրոլետարիատին պրոլետարական առաջին պետութեան դերի և նշանակութեան մասին, վորպես համաշխարհային հեղափոխութեան առաջավոր նախադիրքի, կապիտալիստական յերկրների պրոլետարական տարբեր ու բաղմադան խմբերի միջև միացյալ ճակատ կաղմելը և նրանց համախմբումը ԽՍՀ Միութեան պրոլետարիատի շուրջը, — այս բոլորն, ահա, սերտորեն կապված և մեկ յերկրի սահմաններում սոցիալիստական շինարարութեան հնարավորութեան» խնդրին այն յերկրի վոր բռնում և ամբողջ յերկրագնդի մեկ-վեցերորդական մասը։ «Ուրախալի յերևույթները» նույն այդ

ճյուղին ե վերաբերում նաև ՅԵԿԻ-ի (Յերիտասարդու-
թյան Կոմսքեխատական Ինտերնացիոնալի) կազմակեր-
պությունը :

5. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻ- փետրվարյան հեղափո-
նԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ խաթյունից հետո լենին-
ՊԱՅՔԱՐԸ ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ յան կուսակցությունը քա-
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՅԵՎ նակապետ արագ թափում
ԳԱՂԱՔԱՐԱԿԱՆ ՄԻԱՄՆԱ- աճում էր և մի քանի տառ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐ- նյակ հաղար կուսակցա-
ՎՈՂ ՀԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԻ Կանոններից չուտով վերած-

վեց մի կուսակցության, վորի շարքերում ներկայումս
ալեկի, քան մեկ միլիոն անգամ կա (յեթե չհաշվենք
ՀամԼԿՅԵ Միությունը, վորն ընդգրկում է մոտ 2 միլ.
կոմյերիտմիութենականների) : Կուսակցության սահ-
մանների ախորինակ ընդլայնման պայմաններում չառ
բնական կլինեի ուղադի, վոր նրա շարքերում տեղ են
դռնելու նաև վորոշ մանր բուրժուական տարրերը,
վորոնք ընդունակ չեն յեփվելու կուսակցական յերկաթե
կարգապահության կաթսայի մեջ :

«Պրոլետարիատը, — գրում էր Լենինը 1909 թվին, —
ամեն տեղ և ամենուրեք դրահալաքվում է մանր բուր-
ժուադիայից, ամեն տեղ և ամենուրեք կապված է լի-
նում անցողական աստիճանների, կոպմերի և յերանգնե-
րի հաղարավոր թեւերով : Յերբ բանվորական կուսակ-
ցությունն առանձնապես արագ է աճում (ինչպես այդ
յեղալ մեկանում 1905—1906 թվականներին), — այլ ևս
անխուսափելի յե դառնում նրա մեջ ախալի տարրերի
մուտք գործելը, վորոնք տողորված են մանր բուրժուա-
կան վողով : Յեվ ախտեղ վող մի վատ բան չկա : Պրո-

լետարիատի պատմական խնդիրն է—մարսել, վերուսու-
ցանել և վերադաստիարակել Հին Հասարակության այն
բոլոր տարրերը, յոր նա թողնում և պրոլետարիատին,
վորպես ժառանգություն՝ մանր բուրժուազիայի շար-
քերից դուրս յեկածների ձևով։⁶ Սակայն, դրա համար
հարկավոր և, վոր պրոլետարիատը վերադաստիարակի
այդ յեկվորներին, վորպեսզի պրոլետարիատն ազդեցու-
թյուն թողնի նրանց վրա և վոչ թե նրանք՝ պրոլետա-
րիատի վրա»։

Իսկ յեթե, յենթադրենք, այդ տարրերը, ներարկ-
վելով կուսակցության մեջ, համառորեն չեն յենթարկ-
վում վորևէ «վերադաստիարակման», ի՞նչ անել այն
ժամանակ նրանց հետ։ Լենինը մի ուրիշ տեղում շատ
պարզ և մոբոչակի պատասխան և տալիս այդ հարցին.—

«Կուսակցությունը—կամավոր մի միություն և,
վորն անխուսափելիորեն պիտի տարանկման յենթարկ-
վելը՝ նախ—դադարապես, իսկ ասպա—նաե նյութա-
պես, յեթե նա չզուրկ իրան այն անդամներից, վորոնք
հակակուսակցական հայացքներ են քարոզում»։

Սակայն, այդ «զաման» զուգընթաց անհրաժեշտ և
նաե կուսակցության կազմի մշտական և հարատե նո-
րոգումը և թարմացումը պրոլետարական նոր և լուսավո-
րարերով։ Ինչպես հայտնի յե, թե՛ մեկ և թե՛ մյուս
միջոցը մեր կուսակցությունը շատ անգամ և կիրառել
նաե մեր քննության յենթակա ժամանակամիջոցում։
Այսպես, որինակ, կարելի յե նշել կուսակցության դը-
տումը 1921 թվին, կուսակցության X-րդ համագու-
մարից հետո, կուսակցության շարքերի ներկայիս դը-
տումը տրոցկիստական ոպոզիցիայից, «Լենինյան կոչը»
և այլն։ Յեթե մոտիկից նայելու լինենք վերջին տարի-

ների ընթացքում յերևան յեկած սպողիցիոն բոլոր հո-
 տանքների ծագման պատմությանը (իրար հետեից հա-
 ջորդարար տապարեղ և յին պալիս սպողիցիայի աշնպիսի
 ալլաձեությունները, ինչպես, որինակ, —բանվորական
 սպողիցիան»—Շլյապինիովը, Կոլոնտայը և ուրիշները,
 «բանվորական խմբակը»—Մյասնիկովի, «Բանվորա-
 կան պրավդա» խումբը, արոցկիստական սպողիցիան՝
 սկսած քառասուն և վեցի բողոքի յերևան գալուց և մինչև
 նրա՝ կուսակցության դեմ մղած ընդհանուր խայտա-
 ռակ ակտերն ու հակահեղափոխական յեղույթները
 Հոկտեմբերյան հեղափոխության տասերորդ տարե-
 դարձին), —յիթե, ասում ենք, մոտիկից նայելու լինենք
 այս ամենին, ապա՝ չնայած այդ բոլոր հոսանքների
 տարբեր ծագումները և «այլ կերպ մտածելուն» այս
 կամ այն խնդիրների վերաբերմամբ, աշնուամենայնիվ
 նրանք բոլորն ել միավորված են տեսակային միեւնույն
 հատկանիշով, վորպիսին կարելի յե վորակել, վորպես
 կուսակցության մարմնի վրա դուրս տված մանրբուր-
 ժուական բծեր։ Այդ բոլոր խմբերը և նրանց առաջնորդ-
 ները հենվում են մարքսիզմի և լենինիզմի դոկտրինայի
 հասկացողության (կամ նույնիսկ՝ անհասկացողու-
 թյան) վրա, նրանք բոլորն ել ոգտագործում են քաղաք-
 նական մասսաների մանրբուրժուական դժգոհությունը՝
 նրանց սահմանափակ և նեղլիկ տեսաչրջանով հանդերձ,
 մասսաների, վորոնք քաղաքական խնդիրները ևս գնահա-
 տում են խանութերում թեյի և սուրճի առատության
 կամ պակասության տեսակետից։

Նրանք բոլորն ել արտահայտում են դասակարգա-
 յին այն պայքարը, վոր մղում են պրոլետարիատի դեմ
 վոչ պրոլետարական տարրերը, թեպետ և վոչ աշնպիսի


բացորոշ ձևով, ինչպես կապիտալիստական յերկրներ-
րում, վորտեղ նրանք, հասարակության այդ վոչ պըս-
լետարական տարրերը, քաղաքականապես և տնտեսա-
պես իշխող են հանդիսանում բանվորների և գյուղացա-
կան չքավոր տարրերի նկատմամբ: Նրանք բոլորն եւ ա-
վելի կամ պակաս չափով հակված են ամբոխամարական
կերպով ոժանդակելու քաղաքականապես հետամնաց
այս կամ այն բանվորական խմբերի նեղ-համաբարական
տրամադրությունները և կամ թե՛ դարկելու քաղաքա-
կան կիսապրոլետարական այս կամ այն տարրերի սո-
ցիալական իր կացությամբ դժգոհ լինելու լարերին:
Նրանք բոլորն եւ տրամադրված են հայհոյելով հայ-
հոյելու («տեք իդորիանականությունը» և այլն) ինչ-
պես կուսակցությունն ամբողջապես, այնպես եւ նրա
կենտրոնական հաստատությունները: Նրանք բոլորն եւ,
վորպես «հույժ» վիբրավորվածներ հաճույքով աղաղակ
են բարձրացնում կենտկոմսկան ապարատի ճշնողա-
կան ուժի մասին: Նրանք բոլորն եւ վոչ միայն թանգ
չեն գնահատում կուսակցական միտանությունը, այլ և
հոժար սրտով պատրաստ են ծվեն-ծվեն անելու լենին-
յան կուսակցությունը. բոլորն եւ կուսակցության դեմ
պայքարելու ճանապարհի վրա կանգնելով, անդապելի
թափով մղվում են այդ պայքարի ուժով գեպի մենչևի-
կական ինքնորոշման ուղիները, չառ բացառիկ դեպքե-
րում կարողանալով չանցնել այն սահմանները, վոր բա-
ժանում են իորհրդային տարրական լոյալությունը հա-
կահեղափոխական լիբերդանովչչինայից: Կուսակցու-
թյան ընդերքում ոպագիցիոն հոսանքների յերեւան գայը
անխուսափելի յե այն չափով, ինչ չափով վոր մեր կու-
սակցությունն եւ առայժմ աճում և դարգանում և դա-


ճակարգերի դեռ ևս չարունակվող պայքարի պայմաններում՝ իր դիալեկտիկաքական հակասությունների դեմ: Սակայն այս հանգամանքը մեզ չպիտի չփոթեցնի, վորովհետև՝ ըստ Լենինի արտահայտության — «մեր սոցալիստները առողջ են և դիմացկուն, մենք պնդաքար մարքսիստներ ենք: Մտքի ազատությունն ու քննադատության ազատությունը մեր կուսակցության ներսում յերբեք չեն կարող հարկադրել մեզ մոռանալու, վոր մարդիկ կարող են կամավոր և ազատ միությունների համար ազատորեն խմբավորվել, կազմելով այսպես կոչված կուսակցություններ»:

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Յեմ. Յարոսլավսկի. — «Համկոմկուսի պատմության համառոտ տեղաբեկներ», մաս II, 2. Լենին. — Յերկերի ժողովածու, հատորներ XVIII և XIX, 3. Սաալին. — «Ոստիգիայի մասին» ճառեր և հոդվածներ, 1921-1927 թ., 4. «Կոմունիստական Ինտերնացիոնալի ուղի», հրատ. «Պրիբոյլ», հոդվ. ժողովածու, 5. Մոլոտով. — «Կուսակցության քաղաքականությունը դյուդում», հոդվածներ և ճառեր:

















ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045074

[274]



A $\frac{I}{8230}$

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊ.
